

94 = 94 =

ՈՒՌՁԵՆՑԵԼԴ

# Պ Ր Ո Ց ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Պ Ր Ա Կ Վ.



ԱՐՇԵՍԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ  
 ՀԱՄԱՇԻԱՐՉԱՅԻՆ  
 ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

№ 35



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇԵՍՆ  
ՏԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԱՄԽԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

— յեվ —

Վ Ա Ճ Ա Ռ Վ Ո Ի Մ Ե Ն

Ռ . Կ .

1. Ա . Լագովսկի .—	«Հոսանքների պայքարը համաշխարհային արհաւիրքի մեջ», (սպառոված)	
2. » » »	«Արհաւիրքի ժամանակների խնդիրներն ու դրանց լուծումը», (սպառոված)	
3. Ե յ Դ Ո Ւ Ա .—	«Անարկներ Արեւելքի բանվորական շարժման մասին», (սպառոված)	
4. Արկ-Ան .—	«Բանվ. շարժման պատմ. Անդլիա-լիայում, Ֆրանսիայում և Գերմանիայում», (մնացել են սակավաթիվ որինակներ)	
5. «Գործարկումների և տեղիումների ուղեցույց» . . . . .		1
6. «Աշխատանքի որևնադիրք» . . . . .		15
7. Անտոշկին .—	«Պրոֆեսիոնալ շարժումն Ռուսաստանում», (մնացել են սակավաթիվ որինակներ)	
8. Սենյուշկին .—	«Գործարկումների և տեղիումների անկլիքները ներկա պայմաններում» . . .	25
9. Գուրեվիչ .—	«Լենինը և արհաւիրքի ժամանակները» . . .	50
10. Ֆարրիկանտ .—	«Սոցիալական ապահովագրությունը», (սպառոված)	
11. Տ Ե Մ Ե Ր Ի Ն .—	«Ի՞նչ է արհաւիրքի ժամանակների կանոնադրությունը» . . . . .	25
12. Սպիրանսկի .—	«Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մայր» .	20
13. Բիլսովսկի .—	«Բանվորների և ծառայողների ապահովագրությունը հաշմանդամության դեպքում», (սպառոված)	
14. «Կանոնադրություն բանվորական գրադարանի» . . . . .		15
15. Չ Ե Կ Ի Ն .—	«Անարկներ բանվորական շարժման պատմությունից» . . . . .	35
16. Բժ . Մեյիքյան .—	«Միֆիլիս» . . . . .	20
17. Բժ . Կարապետյան .—	«Մալարիա» . . . . .	5
18. «Յերեք ինտերնացիոնալ», (սպառոված)		
19. Գ Ի Ր Ի Ն Ի Ա .—	«Ի՞նչ է արհաստակցական արտագրական միությունը» . . . . .	30



Հարված ե «Լինտիպով»

ՏՐԵՍԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրան . 421բ .

Պատ . № 2297

Տիրած 1500



886-ԱԳՀ

## ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ ԱՐՃԵՍՏԱԿՑԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԵՋ

**ՀԱՄԳԱՐԱՅԻՆ** Արհեստակցական շարժումը ծագեց և զար-  
**ՅԵՎ ԱՐՏԱ-** զացալ սերտորեն կախումն ունենալով յերկրի  
**ԴՐԱԿԱՆ ՄԻՈՒ-** ժողովրդական տնտեսութեան կացութեանց և  
**ԹՅՈՒՆՆԵՐ** պրոլետարիատի ընդհանուր դասակարգային  
կովի քաղաքական պայքաններից : Հենց այս յերկու վերջին հանդա-  
մանքն սպառիչ պատասխան են տալիս այն հարցին, թե ի՞նչպես են  
բանվորները կառուցում իրենց արհեստակցական միութեաները :  
Ո՞ւր է յիսն ընդունում այդ միութեանները : Ի՞նչպես է յիսն վարում  
իրենց միութեանները և կարգի գցում նրանց սոցիալարձ կապը :  
Այս լուրջ հարց և, չե՞ վոր միութեանները հենց մասսայական կազ-  
մակերպութեաններն են, բանվոր դասակարգի միացումների հիմնա-  
կան ձևն են : Ծիշտ նպատակ դնելը կովում շատ անգամ բավական  
չէ, դեռ պետք է կարողանալ, ինչպես հարկն է, հավաքել և ղեկա-  
վարել ուժերը : Այդ պատճառով անողուտ չէր լինի ընդհանուր յեզ-  
րակացութեաններ անել նախորդ գլուխներում արած մեր մատ-  
նանշումներից, քե ինչպես են կառուցվում արիմիութեանները գա-  
նազան յերկրներում : Արհեստակցական շարժման արշալույսին ա-  
մենուրեք արհմիութեաններն ստեղծվում են ըստ արհեստակցական  
նշանի : Յեվ իրոք միամտութեան կը լինել մտածել, վոր բանվոր-  
ները կարող են միանգամից ; կարճ ժամանակամիջոցում մասսայա-  
կան, ամուր և միասնական կազմակերպութեաններ ստեղծել : Ժա-  
մանակ եր հարկավոր, վորպեսզի կարելի լինել վերածնել այս ար-  
հեստային մասսային, նույնպես և հողագուրկ գյուղացիութեան  
շարքերից յեւթաներին, վորոնք ընկնում է յին Ֆարքիկաններն ու  
գործարանները : Բանվոր մասսան իր դասակարգային շահերը դան-  
դաղ և աստիճանաբար եր գիտակցում : Սկզբնապես նա միանում  
եր միայն իր աշխատանքի պայքանները յառաջնելու համար, վո-  
րովհետև սկզբում աշխատավարձը մի քանի կոպեկով ավելացնելու

կռիվը նրան ավելի մոտիկ և հասկանալի յեր, քան կռիվը բուր-  
ժուական սկետուսթյան դեմ, կապիտալի դեմ: Ամենից վաղ կարո-  
ղացան կազմակերպվել բուրժուադեմոկրատիային ամենապետքական վո-  
րակյալ բանվորները, վորոնք արդեն դիտակցում եյին իրենց ուժը:  
Իսկ վորակյալ բանվորներն ամենից լալ կարող են սպաշտպանել ի-  
րենց նեղ, համքարային շահերը, միանալով մի փոքրիկ համա-  
խրմբված խմբակով, ստեղծելով համքարային միություն:

Ի հարկե այդպիսի միությունները բանվորների ուժերի հա-  
մախմբման դեռ շատ անկատար ձևն եյին: Իրոք, այդ նշանակում  
ե, վոր վորեւե դործարանում (որինակ, մանածադործարանում)  
միացած են վոչ թե տվյալ դործարանի, ևս առավել տվյալ արտա-  
դրության բոլոր բանվորները, այլ ամեն մի համքարություն, ա-  
մեն մի արհեստ ստեղծում ե սևիական մանր միություններ: Այդ-  
պիսով այդ դործարանում դոյություն ունեն ջուլհակների, մանող-  
ների, մեխանիկների, դրամենյակային ծառայողների և ուրիշների  
կազմակերպությունները: Ասենք, որինակ, սլարանի դործարանի  
բանվորները, վորոնք այդ նույն մանածադործական արտադրու-  
թյան մի մասն են կազմում, իրենց առանձին միություններն են  
կազմում և այլն: Որինակ՝ Անգլիայում միությունների թիվը  
1200-ից անցնում է: Բայց այդ քիչ է: Այնպիսի համքարային միու-  
թյուններ կան, վորոնք ընդգրկում են ամբողջ յերկիրը, որինակ,  
Անգլիայի «Մեխանիկների Միացյալ միությունը»: Նրա մեջ մտնում  
են ահադին թիվով բանվորներ—356,000 մարդ: Բայց շատ ավելի  
վատ է, յեթե համքարային միությունը դրա հետ միասին լուկալ  
ե, այսինքն, միացնում ե վորեւե արհեստի բանվորներին վոչ թե  
ամբողջ յերկրի շրջանակներում, այլ միայն տվյալ քաղաքի շրջա-  
նակներում, որինակ՝ «Մանչեստերի ձուլիչների սղգային միու-  
թյունը» (22,000 մարդ), «Արուլբի կաղապարադործների շտաբն-  
դական միությունը Գլազգոյում» (մոտ 1000 մարդ) և այլն:

Դժվար չե սպասկերացնել, թե այս բոլորի շնորհիվ բանվոր  
դասակարգի ուժերը ցրիվ են դալիս: Նրանք ցրիվ են դալիս  
ըստ առանձին քաղաքների, նրանք ցրիվ են դալիս ըստ առանձին  
ձեռնարկությունների: Թող վորեւե քաղաքում, վորտեղ միություն-  
ները կառուցված են ըստ համքարային նշանի, դործադուլ հայտա-  
բարելու անհրաժեշտություն ծագի: Միանգամից չես կարող այլ  
անել: Չե՞ վոր ամեն մի դործարանում աշխատում են դանազան մի-  
ությունների պատկանող բանվորներ—յերբեմն 5-6 միություն—դրժ-

վարե նրանց դործողութ յունները միացնել, մինչդեռ նրանցից թե-  
կուզ մեկի հրաժարումը գործադուլի պաշտպանութ յունից, կարող  
է տասպալել ամբողջ գործադուլային շարժումը: Իսկ բացի դրանից  
ամեն մի համաքարային միութ յուն հենց նրա համար, վոր համաք-  
արային է, սովորաբար ընդդրկում է վորքաթիվ բանվորներ և չա-  
փազանց վորք միջոցների տեր է: Փոխանակ կազմակերպելու բան-  
վորներին ինչքան կարելի լավ և ընդհանուր ուժերով կռիվելու կա-  
պիտալիստների դեմ, համաքարային միութ յունները հաճախ ահադին  
ուժ են վատնում իրար հետ ունեցած վեճերի և դատերի վրա, թե  
վոր միութ յան մեջ պետք է մտնի այս կամ այն բանվորը: Իսկ շատ  
անդամ հեշտ չեն այդ վճռել, յեթե հիշենք, վոր Անդլիայում, որի-  
նակ, մենակ մետաղագործական արդ յունարերութ յան մեջ 150 ա-  
վելի միութ յուն կար:

Սրան պետք է ավելացնել այն, վոր թույլ համաքարային միու-  
թ յունների պահելը համեմատաբար թանկ է նստում նրա անդամնե-  
րին, ամեն մի, նույնիսկ վորքիկ միութ յուն պետք ունի շատախ,  
գրասենյակի և այլն:

Այնուամենայնիվ այլ կերպ, քան համաքարային միութ յուննե-  
րով, չեր կարող առաջ դնալ բանվորների միացումը: Բանվոր դա-  
սակարդը և նրա կազմակերպութ յուններն այն ձևով, ինչպես այ-  
ժըմ գոյութ յուն ունեն, յերկնքից չեն ընկել: Ճիշտ էր ասում իր  
ժամանակին ընկ. Լենինը. «կապիտալիզմի ժամանակ պրոլետարնե-  
րի միացումն ընթանում էր ըստ համաքարութ յունների և արհեստ-  
ների: Այդ առաջադիմական յերեւոյթ էր, այլ կերպ պրոլետա-  
րիատը միանալ չեր կարող: Ասել, վոր պրոլետարիատը կարող էր  
միանգամից միանալով մի դասակարգ կազմել, այդ արտուրդ է  
(անհեթ-հեռւք յուն): Այդպիսի միացումը կարող է տեղի ունենալ  
միայն տասնամյակների ընթացքում»<sup>\*)</sup>: Ապա-«Տնտեսական կռիվը  
բանվորների հավաքական կռիվն է սնտեսատերերի դեմ բանվորա-  
կան ուժը ողտակար պայմաններով վաճառելու համար, բանվոր-  
ների աշխատանքի և կյանքի պայմանների լավացման համար: Այդ  
կռիվն անհրաժեշտորեն արհեստակցական կռիվ է, վորովհետե  
աշխատանքի պայմանները չափազանց բազմազան են զանազան ար-  
հեստներում: Հետեաբար այդ պայմանների լավացման կռիվը չի  
կարող ըստ արհեստների չմղվել»<sup>\*\*)</sup>

<sup>\*)</sup> Վ. Լենին. — Ճառ արհմիութ յունների 3-րդ համառուսական  
համագումարում (1920 թ.):

<sup>\*\*)</sup> Վ. Լենին. — Ի՞նչ անել (1902 թ.):

Արհեստակցական շարժումն աճում է: Համբարային միությունները վորպեսզի ավելի լավ պաշտպանեն իրենց շահերը միացած ձեռնարկուների գործից, սկսում են ամբողջ յերկրի սահմաններում միանալ, այսինքն այսպես կոչված ըստ «ուղղահայաց գրծերի»: Քննենք, թե ինչպես է կառուցվում 50-80 թ. թ. շրջանի վորեւ տրեդ-յունիոն: Նա ի հարկե գործարկում չունի, վորովհետեւ ձեռնարկությունների մեջ վոչ թե մեկ, այլ մի քանի միություն կա: Միության տեղական բաժանմունքի ստորին բջիջի ընտրությունը սովորաբար տեղի յե ունենում միության անդամների ընդհանուր ժողովում: Կոմիտե յե ընտրվում. ամենորյա աշխատանքը կատարող պաշտոնյաները քարտուղարն ու գանձապահն են: Մի քանի տեղական բաժանմունք իրենց պատգամավորներն են ընտրում հետևյալ աստիճանի—շրջանային կոմիտեյի համար (անգլիական մեծ միությունները, վորոնք ընդգրկում են ամբողջ յերկիրը, մինչև 15 այդպիսի շրջան ունեն): Ապա շրջանի անդամների ընդհանուր քվեարկությամբ ընտրվում է շրջանային քարտուղարը: Վերջապես միության գերագույն որգանն է հանդիսանում ազգային գործադիր կոմիտեն: Նրա անդամներն ընտրվում են ըստ շրջանների, ընդհանուր քվեարկության հիման վրա: Այդպիսի ընդհանուր քվեարկությամբ է ընտրվում նաև գլխավոր քարտուղարը: Բացի այդ, գոյություն ունի նաև պատգամավորների համագումար, պատգամավորներն ընտրվում են միության անդամների կողմից ըստ շրջանների: Այդ համագումարը մեծ որենսդիր իշխանություն ունի (որինակ՝ միայն նա կարող է փոխել միության կանոնադրությունը և այլն), սակայն այդպիսի համագումարները մինչև պատերազմ սակավ էյին հրավիրվում, յերբեմն մի քանի տարին մեկ անգամ:

Ինչո՞ւմն են անգլիական միության այդպիսի կառուցվածքի առանձնահատկությունները: Ամենից առաջ նրանք ապահովում են ահագին իշխանություն արհեստակցական չինովնիկության, արհքյուրոկրատիայի համար: Վճարովի ղեկավարող աշխատող է լինում սովորաբար մենակ քարտուղարը: Շրջանային կոմիտեյի քարտուղարը, այսպես ասած, իր բունցքի մեջ է պահում տեղական բաժանմունքները, վորովհետև միայն շրջանային կոմիտեն իրավունք ունի հավաքական պայմանագրեր կնքել և այլն: Իր հերթին, հենց վոր քանը հասնում է ձեռնարկուների դեմ կոմեյուն,



գործադուլին, շրջանային կոմիտեները գլխավոր քարտուղարի առաջ անցոր են, վորովհետև փոխադարձ ուղնութեան և գործադուլային ֆոնդերը կենտրոնական կոմիտեյի լիակատար անորինութեան տակ են գտնվում: 2-րդ գլխում մենք արդեն ծանոթացանք այդ պարզ բնույթագրին, վոր տալիս և վերբը միութեան գլխավոր քարտուղարին: Յե՛վ իրոք, այդպիսի քարտուղարները, վորոնք, ի դեպ սասձ, հաճախ ընտրվում են ցմահ, այդ ամբողջ միութենական բյուրոկրատիան, վոր ղեկավարում էր անգլիական տրեդ-յունիոնները, շատ անգամ էր ուղտագործում միութենական միջոցների վրա ունեցած իր իշխանութունը, վորպեսզի խանդարի իր համար անցանկալի գործադուլները և ամբողջ արհւարժումն ուղղի դեպի խաղաղ համաձայնողականութեան հունը:

Բայց չէ՞ վոր անգլիական միութեաններին այնուամենայնիվ մնում է հանրալծիւր (ոեֆերենդումը), վորով կարելի յեր «սեղմել» ամենազոր քարտուղարներին: Չէ՞ վոր, թե պաշտոնյաների ընտրութեանը, թե հալաքական պայմանագրերի կնքումը և՛ թե գործադուլային կռիւի հարցերը վճովում են հանրալծով: Սակայն բանն այն է, վոր ոեֆերենդումին համարյա միշտ մասնակցում է միութենական մասսայի շնչին տակոսը (5—10%), այն էլ միութենական բյուրոկրատիան հմտորեն սանձում է նրան, «մշակում» համապատասխան ադիտացիայի միջոցով և քվեարկութեան ժամանակ հարցերը այնպես հմտորեն և զնում, վոր շարունակ ցանկալի փոզով և պատասխան ստանում:

**Ի՞նչ՞՞՞ ՅԵ՛Վ Ի՞նչ՞՞՞** Սակայն համաբայային արեխտակցական միութեանները յերկար չեն պահուի իրեց գոյութեանը: Կապիտալիզմի աճումը, տեխնիկայի անընդհատ կատարելագործումը, տրեստիերի և սինդիկատների յերևան գալը, նշանավոր չափով փոքրացնում է վորակալ բանվորների դերն արտադրութեան մեջ և առաջ է մղում, իրբև արդյունարեութեան հիմնական կազր, անվարժ բանվորների լայն մասսաներին, ինչպես նաև միջակ-պատրաստված բանվորներին, վորոնք նեղ մասնագիտութեան չունին:

Մենք արդեն ցույց ենք տվել 90-ական և հետագա տարիների (մինչև 1914 թ.) Անգլիայի որինակով, թե ինչպես ազդեց այդ հանգամանքն արհեստակցական շարժման շինարարութեա վրա: Դան-

դադ, անվաստ՝ կերպով անդլիական արհմիություններն սկսեցին մոտենալ ըստ արտադրութեան նշանի կոտարվող շինարարութեան: Արտադրական միությունների անհրաժեշտութեան մասին տրեղ-յունիոնները կոնգրեսը համապատասխան բանաձև ընդունեց միայն 1911 թ. (Նյուեկեաստում): Միություններից մի քանիսն այդ ճանապարհով մինչև վերջ հասան, սերտորեն մոտենալով արտադրական նշանի հիմնական պահանջին՝ «մեկ ձեռնարկություն—մեկ մություն»: Բանն այդպես եր անդլիական ածխահատների միութեան մեջ—«հանքային բանվորների մեծ բրիտանական Ֆեդերացիայում»: Միութեան տեղական ըջիջները (կամ ինչպես նրանք այլ կերպ կոչվում են «լոժաները» կամ «սեկցիաները») միացնում են հանքավայրի ամբողջ պերսոնալը, անկախ արհեստից, սկսած հասարակ բանվորից և վերջացրած մեխանիկով ու գրասենյակային ծառայողով: Բացառութեան են կազմում միայն ժամանակավոր բանվորները, վորոնք հանքափորական գործի հիմնական աշխատանքները չեն կատարում, ինչպես մանույրները, վականագործները և այլն:

Ճիշտ է, «Մեծ Բրիտանական Ֆեդերացիան» դեռ չէր կարողացել միացնել բոլոր հանքափորներին: Նրա կողքին գոյություն ունին նաև այնպիսի համքարային կաղմակերպություններ, ինչպես, որինակ՝ «հնոցապահների, վերակացուների (надемотрщиков) և այլ գլխավոր Ֆեդերացիան», «Հանքահորերի մաշինիստների և կատյուլչիկների շտաբանական միությունը» և այլն: Սակայն անցյալ համքարականութեան այդ մնացորդների մեջ «հանքային բանվորների մեծ բրիտանական Ֆեդերացիան» քիչ մեկը ունի:

Անդլիական տրեղ-յունիոնների ուրիշ Ֆեդերացիաները սուղորարար ավելի քիչ են համախմբված և տոկուն, քան վերը նրկարագրված հանքափորների Ֆեդերացիան: Այսպես, որինակ, նրանցից ամենալավ կաղմակերպություններն այսպես էլին կաղմվում.—յեթև վորեև քաղաքում, ասենք, մանածագործական արտադրութեան համքարային միությունների հինգ տեղական կոմիտեներ կային (որինակ՝ բամբակ մանողներ, ջուլհակներ, գըղողներ, շորացնողներ, հինողներ), ապա այդպիսի կոմիտեները ներկայացուցիչ էլին ընտրում բամբակեղենի արտադրութեան բանվորների տեղական Ֆեդերացիայի համար: Շրջանային կոմիտեները միանալով կազմում էլին շրջանային Ֆեդերացիա:

վերջապես միության գլուխը, գործադիր կոմիտեն ընտրվում էր միության համաանդրիական կոնֆերենցիայում: Կոնֆերենցիան այնպիսի հաշվով էր կազմվում, վոր նրա մեջ ինչքան հնարավոր է, լրիվ կերպով ներկայացվեյին Ֆեդերացիայի մեջ մշտնոդ բոլոր հինգ միությունը և գործկոմի անդամների ցանկը պետք է քվեարկության զրվեր ամեն մի միության մեջ առանձին: Իսկ Ֆեդերացիայի գլխավոր քարտուղար ընտրվում էր ամբողջ կոնֆերենցիայի միատեղ քվեարկությամբ: Այնուամենայնիվ Ֆեդերացիայի կազմի մեջ մտնող համաքարային միությունների ամբողջ աշխատանքը լրիվ միացնել չէր հաջողվում: Այսպես, որինակ, հինգ միությունից ամեն մեկն իր կենտրոնական գործադուլային ֆոնդն ուներ, ինքն էր ստուգում իր տեղական բաժինների աշխատանքը, ղեկավարում հավաքական պայմանագրերի կնքումը: Իսկ Ֆեդերացիան միայն այդ բոլոր գործողությունները համաձայնեցնում էր իրար հետ:

Սակայն Ֆեդերացիաների կազմվելու կողքին, Անգլիայում պահպանվեցին նաև մի շարք պարզապես համաքարային միություններ, որինակ՝ քարտաշների միությունը, կաղապարագործների միությունը, գրաշարների Լոնդոնի ընկերությունը և այլն:

Ինչպես արդեն վերը նշված է, անգլիական արհմիությունների կառուցվածքի այս բոլոր փոփոխությունները համապատասխանում էյին արհարժման մասնակի ձախացմանը, լայն գործադուլների, սոցիալիստական կուսակցությունների ազդեցության ուժեղացմանը, այն գիտակցության աստիճանական, դանդաղ աճմանը, վոր բանվոր դասակարգի համար անհրաժեշտ է, ինչքան կարելի չէ, ավելի միացնել իր ուժերը վոչ միայն առանձին կապիտալիստների, այլև կապիտալիստների դասակարգի, կապիտալիստական կարգի դեմ կռվելու համար: Այնուրեք դասակարգային հակաուրջյունների սրումը նպաստուն է, վոր միությունները մոտեման արտադրական նշանով կառուցվելուն:

Այսպես, գերմանական արհարժումը, վոր ծնվեց ու աճեց հոհնեցուրների փոստիկանական կալվածատիրական միապետության և ձեռնարկունների ուժեղ միությունների դեմ վարած կատաղի քաղաքական կռվում, արդեն 90-ական քվականներին կազմում է հզոր միություններ (1891 թվին 62 կենտրոնական արհեստակցական միություն կար, իսկ 1913 թվին—49) նիշտ կառուցված նահանգական բաժիններով և կենտրոնական կոմիտեներով: Յեթե 1910 թվին Անգլիայում մեկ տրեղ-յունիոնի միջին

հաշվով ընկնում է 2,170 անդամ, ապա Գերմանիայում այդ ժամանակ մեկ միությանն ընկնում է 50,000 անդամ: Այդ միություններից վեց կազմակերպության մեջ արտադրական նշանն ուժեղ է և հատկապես լրիվ է կիրարկված, դրանք են՝ մետաղագործները, փայտի գործի բանվորները, մանածագործները, հանքային բանվորները, հասարակ բանվորները, փոխադրիչները, վորոնք ընդգրկում են «ազատ» միությունների ամբողջ քանակության 50 տոկոսը: Սակայն արտադրական սկզբունքը գերմանական արիշարժման մեջ դեռ կատարյալ ձև չի ընդունել: Այդ բանին նշանավոր չափով նպաստել է գերմանական արիշարժման համաձայնողական բնույթը, նրա դեղին ստաջնորդների անկարողությունը և չկամեցալը բանվոր դասակարգի բոլոր ուժերը վերջնականապես միացնել բուրժուազիայի դեմ վնասական կովի համար: Որիանակ՝ զերմանական մետաղագործը, վորտեղ էլ վոր նա աշխատելիս լինի, — մանածագործարանում, ածխային հանքավայրում, փայտի թե պողպատածուլական գործարանում, — պարտավոր է անպատճառ մետաղագործների միության մեջ մըտնել: Ուրեմն, ստացվում է այն, վոր, ասենք, մի խոշոր մանածագործական ձեռնարկության մեջ, մեքենային բաժանմունքի և վերանորոգության արհեստանոցի բանվորների մեծամասնությունը վոչ թե մանածագործների միության անդամ պիտի դառնա, այլ՝ մետաղիստների: Հետևանքն այն կլինի, վոր միեկունյն ձեռնարկության մեջ կաշխատեն վոչ թե մեկ միության, այլ յերկու, գուցե նույնիսկ յերեք, չորս միության անդամ: Գործագույլի ժամանակ կարող է նրանց մեջ համերաշխություն չլինել, իսկ այդ կարող է կործանիչ լինել բանվոր դասակարգի կովի հաջողության համար:

Յեթև Գերմանիայի արհեստակցական շարժումը մի քիչ «կիսատ» մնաց, չկարողացավ լրիվ անցկացնել արտադրական նշանը, ապա այնուամենայնիվ ամեն մի խոշոր միություն կարգի ընկած, խիստ կենտրոնացրած մի հզոր կազմակերպություն է: Այդ տեսակետից զերմանական արհմիությունները նշանավոր չափով գերազանցում են անգլիական տրեյդ-յունիոններին: Վերջենք մի որինակ, այսպես, զերմանական միություններից խոշորագույնը—մետաղագործների միությունը:

Միության զերազույն որդանը համագումարն է հանդիսանում, վոր հրավիրվում է յերկու տարին մեկ: Համագումարն ընտրում է կենտրոնական վարչություն, վորին կից գոյություն ունի, այսպես

կոչված, «Հակելչ կոմիտե», վերաքննիչ հանձնաժողովի նման մի  
 րան, նշանաւոր իրավունքներով: Ամբողջ յերկիրը բաժանված է  
 11 շրջանի, ընդ վորում ամեն մեկի գլուխ է անցած 5 մարդուց  
 կազմված մի հանձնաժողով: նրանցից վարձատրություն է ստա-  
 նում միայն հանձնաժողովի նախագահը: Այդ բոլոր շրջանային նա-  
 իադահները միութենական վարչության անդամների և միութե-  
 նական որդանի խմբադրի հետ միասին կազմում են «Միության  
 խորհուրդը»: Այդ խորհուրդը համագումարների միջև ընկած ժա-  
 մանակամիջոցում վճռում է միութենական կյանքի հիմնական հար-  
 ցերը: Իր հերթին շրջանը բաժանվում է միության մի շարք տեղա-  
 կան բաժանմունքների: Իբրև որինակ առնենք վորևէ խոշոր քա-  
 դաք: Քաղաքում կա միության տեղական բաժանմունք: Քաղաքի  
 ամբողջ տերրիտորիան բաժանված է մի շարք սեկցիանների և ամեն  
 մեկում հատուկ սեկցիոն ժողով կա սեկցիոն վարչությամբ: Բացի  
 այդ, ամեն մի տեղական միության ներսում միության մեջ մտնող  
 33 արհեստներից ամեն մեկը հատուկ արհեստակցական միացում  
 է կազմում (ղարբիներին, փականագործներին և այլն): Այդ միա-  
 ցումն իր հատուկ վարչությունն ու ժողովն ունի, հետևում է տա-  
 րիֆային պայմանագրի կատարմանը, ոգնում է գործադուլների  
 իրագործմանը և այլն: Վերջապես հենց գործարանում միության  
 անդամները կազմում են գործարանային խմբակ, վորին ղեկավա-  
 րում են մեկ կամ մի քանի պատգամավոր: Սակայն միության ամ-  
 բողջ աշխատանքը խստիվ կենտրոնացած է: Սեկցիոն աշխատողնե-  
 րը (վորոնք առավելապես ագիտացիա յեն անում) և պատգամա-  
 վորները հաստատվում են տեղական վարչության կողմից, իսկ  
 վերջինիս անդամները—կենտրոնական վարչությունից: Տեղական  
 բոլոր անդամավճարների 83 տոկոսը հանձնվում է կենտրոնական  
 վարչությանը, բոլոր Փոնդերը և գումարներն ամբողջովին կեն-  
 տրոնացած են: Առանց կենտրոնական վարչության հավանության,  
 անկարելի յէ վորևէ գործադուլ: Բոլոր անդամատոմսերը, կանո-  
 նադրությունները, նույնիսկ գանձարկղների գրքերը, «բոլորը մին-  
 չէ վերջին թերթը», տեղական բաժանմունքները միայն կենտրոնից  
 են ստանում: Հասկանալի յէ թե ինչու այսպիսի «կատարելապես—  
 կենտրոնացրած կազմակերպչական մեխանիզմը ունիտարիստական  
 բյուրոկրատիային հարյուրավոր ու հազարավոր հնարավորու-

թյուններ և տալիս, վոր արվեստականորեն իր ձեռքում պահել իշխանությունը»։<sup>\*)</sup>

Ֆրանսիան, ինչպես նկարագրել եմք վերևը, աչքի յե բնկնում էր ժողովրդական տնտեսությամբ մանր-բուրժուական բնույթով, այնտեղ տասնյակ ու հարյուր հազարավոր մանր գործարաններ, փոքրիկ ֆաբրիկաներ կան և միայն փոքրաթիվ խոշոր ու յերբեմն նաև հսկայական ձեռնարկություններ։ Ձեռնարկուների աշխատի ցրվածությունը վորոչ ժամանակ հնարավոր էր դարձնում առանձին մանր սինդիկատների հաջող կռիվն առանձին կապիտալիստների դեմ։ Սրանից և Ֆրանսիայի միությունների չափազանց բազմաթիվ լինելը, վորոնք միևնույն ժամանակ լուրջ միություններ էին։ Այսպես, 1904 թ. Ֆրանսիայում 1,792 սինդիկատ կար, վորոնք միացնում էին 150,000 մարդու։ Սակայն բուրժուա-վոստիկոնական պետության նկշումը, վաշխառուական-ֆինանսական կապիտալի ուժը հարկադրեցին ֆրանսիական սինդիկատների փեղեկացիականեր կազմել։ Յեկ չափազանց բնորոչ է, վոր աշխատի ֆեդերացիաները կառուցվում են վոչ թե ըստ համբարային նշանի, այլ առավելագույն ըստ արտադրականի։ 20-րդ դարի սկզբին ֆրանսիական ծանր արդյունաբերության առումը, ձեռնարկուների խոշոր միությունների կազմվելու սկիզբը, միություններ, վորոնց դեմ մանր միություններն անզոր էին, դրա հետ միասին Ֆրանսիայում քիչ-վարժված ֆաբրիկա-գործարանային բանվորների խոշոր մասսաների յերևան գալը, ինչպես մենք արդեն դիտենք, ուժեղ կերպով նպաստեցին, վոր Ֆրանսիական միություններն ըստ արտադրության միանան։ Իդուր չէ, վոր 1906 թ. Ամյենի համագումարում վորոշում ընդունվեց անփոփոխ պահել Ֆրանսիայի արդեն գոյություն ունեցող բոլոր միությունները, վորոնք կառուցված են ինչպես արհեստակցական, այնպես և արտադրական նշանով, իսկ հոր արհմիությունները կառուցել բացառապես ըստ արտադրության։ Այդ շրջանում Ֆրանսիայում արդեն 63 ֆեդերացիա կար։ Արդյոք նման են նրանք անգլիական կամ դերմանական միացումներին։ Այդ հարցի պատասխանը նշանավոր չափով բացասական է։

Ֆեդերացիայի ամեն մի տեղական կոմիտե, այսինքն ամեն մի սինդիկատ, համարյա բոլորովին ինքնուրույն և իր գործողությունների մեջ։ Նա ինքը հավաքում է ու ծախսում անդամավճար-

<sup>\*)</sup> Ի. Մայսկի.—«Արևմուտքի արհարժման պատմությունը», էջ 191 (ոուսերեն)։

ները, ինքը վարում է սնտեսական և դործադուլային կռիվը: Ընդհանուր թողովը ընտրում է սինդիկալ կոմիտե, ընդ վորում սովորաբար պաշտոնյաները վարձատրությունն չեն ստանում: Առանձին սինդիկատների իրավունքները Ֆրանսիական արհարժման մեջ նույնիսկ չափազանց լայն կերպով են հասկացվում: Այսպես, որինակ, կենտրոնական Ֆեդերատիվ կոմիտեն, վոր ղեկավարում է վորևէ արտադրության (որինակ՝ անդադործների) սինդիկատների Ֆրանսիական ամբողջ միացումները, ընտրվում է սինդիկատների համագումարում, ընդ վորում ամեն մի տեղական սինդիկատ համագումար և ուղարկում մեկ պատգամավոր, անկախ իր անդամների թվի քանակից: Այդպիսով մի խոշոր արդյունաբերական կենտրոնի անդադործների սինդիկատ, վոր 1000 անդամ ունի և մի խուլ անկյունի ավանի միատեսակ սինդիկատ, վոր 50—75 անդամ ունի, յերկուսն ել մեկական ձայն ունին: Կենտր. կոմիտե ունեցող միություններ, վորոնք կառուցված են այնպես, ինչպես մեկ մոտ Ռուսաստանում, Ֆրանսիայում պատահում են յերկաթուղային ծառայողների, տպարանականների մոտ և այլն:

Վորովհետև տեղական սինդիկատներն իրենց կենտրոնական սրգանին շատ քիչ մաս են հանում, այդ պատճառով Ֆեդերալ խորհուրդը սովորաբար առանց գրոչի յե և ղեկավար միութենական աշխատանք կատարելու վոչ մի միջոց չունի: Բացի այդ Ֆրանսիական բոլոր միություններն ընդհանրապես աղքատ են, վորովհետև փոխադարձ ոգնության խոշոր Փոնդեր կուտակելու փոխարեն գերազասում են կռիվ մղել դուժադուլով, «ուղղակի դործողությամբ»: Սակայն այս բոլորը չի նշանակում, վոր Ֆրանսիական արհեստակցական շարժումն արդեն չափազանց ձեազուրկ է: Նա մեծ չափով կենտոնացրած է, բայց ուրիշ դժով, միջմիութենական միացումների դժով (տես շարունակությունը):

Ռուսաստանում 1905—1907 թ. թ. չըջանում պայմաններն ընդհանուր առմամբ նպաստում էյին, վոր արհմիություններն ըստ արտադրության կառուցվեն.—արդյունաբերությունը միացած էր խոշոր գեոմարկալքյունների մեջ, վորտեղ բանվորների նշանավոր մասսաներ էյին կուտակված, քաղաքական կռիվը չափազանց սրված էր: Բայց Ռուսաստանի յերիտասարդ արհարժումը, վորի առաջին ծիլերի վրա, բանն այն է, իր ծանր վոտն էր գրել պահանջողական բաժանմունքը, չէր կարող իր բոլոր հնարավորություններն սպտադործել: 1905—1907 թ. թ. կաղմակերպված միությունների մեծամասնությունը կառուցված էր ըստ արհեստակցական

նչանի, սակայն շարունակ ավելի յեր յերևան գալիս ըստ արտադրութիւնների միանալու ձգտումը (մետաղագործների, տպագրիչների, փայտագործների և ուրիշների մեջ:\*)

**ՄԻՋՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ**

**ՄԻԱՅՈՒՄՆԵՐ:**

Մենք վերևը հիշեցինք, վոր Ֆրանսիայում ուժեղ են միջմիութենական կազմակերպութիւնները: Իսկ ի՞նչպես են

ծագում այդպիսի կազմակերպութիւնները:

Յենթադրենք, վոր Ֆրանսիայի քաղաքներից մեկում աշխատում են մի քանի սինդիկատ: Նրանցից մեկը (որինակ՝ մանածագործականը) համառ դործողու է սկսել: Բայց դրա համար միջոցները պակասում են, կենտրոնական կոմիտեյի ոգնութիւնը բավական չէ: Բացի այդ, պետք է, վոր ուրիշ սինդիկատների վոչ միայն հարկաւոր դրամական գումարների հավաքման դործին մասնակից դարձնել, այլև նրանց դործադուլի մեջ քաշել, վորպեսզի տնտեսատերերի վրա ընդհանուր ճնշումով կարելի լինի պաշտպանել դործաթողներին: Ծառ անդամ այդ հատկապես անհրաժեշտ է. որինակ, այն ժամանակ, յերբ քաղաքի բոլոր ֆարրիկանտները և դործարանատերերը վճռեն աշխատաւարձը ցածացնել և այդ ցածացումը կիրարկեն աստիճանաբար յերբեմն մեկ, յերբեմն մյուս արտադրութիւն մեջ: Կապիտալիստները պատրաստվում են դորդադուլների առանձին ջոկատներին մեկ-մեկ հարվածել: Վորպեսզի կռիվը բանվորների ուժերից վեր չլինի, անհրաժեշտ է, վոր նրանք քաղաքում ունենան բոլոր արհեստակցական միութիւնների կռիվը ղեկավարող, նրանց միանցնող մի կազմակերպութիւն: Անհրաժեշտ է, վոր նրանք ունենան, ինչպես մենք ենք ասում, միջմիութենական կազմակերպութիւն (մեզ մոտ Ռուսաստանում, որինակ, նահանգական արհմիութիւնները, արհեստակցական միութիւնների զաւտական կամ շրջանային բյուրոները և այլն): Ֆրանսիայում այդպիսի կազմակերպութիւն և Աշխատանքի բորսան, վոր կազմված է տեղական միութիւնների ներկայացուցիչներից: 1912 թ. Ֆրանսիայում 5,257 սինդիկատ կար 1,064,000 անդամով. նրանցից Աշխատանքի բորսան դեռ 1910 թ. ընդգրկել էր 2,566 սինդիկատ 520,692 անդամով: Աշխատանքի բորսաները վոչ միայն միացնում ու զեկաւարում են բոլոր տեղական սինդիկատների դործողութիւնները դործադուլային շարժման ժամա-

\*) Սրա մասին մանրամասն տես 5-րդ գլուխը:



նակ, այլև պայքարում են այնպիսի որենքների հրատարակման համար, վորոնք պաշտպանում են բանվորի աշխատանքը և նրա միություններն ու լավացնում նրա դրուժխոնքը: Նրանք զբաղվում են նաև աշխատանք վորոնողների համար տեղ գտնելով, կազմակերպում են ոգնություն գործազուրկներին, ճանապարհ գնացողներին, հիվանդներին, ստեղծում են ամեն տեսակ յուսավորական հիմնարկներ (գրադարաններ, թանգարաններ, գանձարկղներ, կազմում են դասախոսություններ, հրատարակում են ժուրնալներ և այլն), սինդիկալիզմի գաղափարի պրոպագանդան են անում և նոր սինդիկատներ են կազմակերպում բանվորների մեջ—առաջին հերթին հետամնաց շերտերի մեջ:

Բայց այդ քիչ է. տեղերում միացած լինելով, Փրանսիական արհաւիրքումը միասնական ղեկավար գլուխ ել ունի ամբողջ յերկրի մասշտաբով—այսպես կոչված ԱԼԿ—Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիան (մեր ՀԱՄԿԽ նման): ԱԼԿ., վոր միացնում է և ուղղություն տալիս Փրանսիական բոլոր միությունների աշխատանքին, առանց դժվարութեան չկազմվեց: Կար ժամանակ, յերբ Փրանսիայում արհեստակցական շարժման յերկու կենտրոն կար—«Աշխատանքի Բորսաների Ֆեդերացիան» (վոր ծագեց 1892 թ.) և 1895 թ. ստեղծված «Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիան»: Այդ յերկու կենտրոնների միջև մրցությունը փաստապես դադարում է միայն 1902 թվին, յերբ Աշխատանքի Բորսաների Ֆեդերացիան վերջնականապես դադարեցնում է իր գոյությունը և ճուրվում է ԱԼԿ. հետ:

Մինչպատերազմական Փրանսիական շրջանի արհեստակցական շարժումն իր կառուցվածքի մեջ զուգորդում է յերկու մոմենտ—մի կողմից նա բավական ուժեղ գլուխ ունի—ԱԼԿ, իսկ մյուս կողմից նա աշխատում է ապահովել տեղերին հնարավորին շատ մեծ ինքուուրոյնություն և ինքնագործունեյություն:

Ահհարժեշտ է նշել, վոր ԱԼԿ ընտրութեան ժամանակ ել ձայնի բրավունք ունեն վո՞թե սինդիկատների ֆեդերացիաները և Աշխատանքի բարսաները, այլ դարձյալ միայն առանձին տեղական սինդիկատները, \*) ընդ վորում մեկական ձայնի, անկախ նրանց անդամների թվից: Ընտրությունների այս յեղանակը, ճիշտ է,

\*) Ամեն մի տեղական սինդիկատ ԱԼԿ մտնելու համար, պետք է մտնի նույնպես իր ազգային ֆեդերացիան և տեղական Աշխատանքային բորսան:

միութենական ստորին կազմակերպություններին թույլ և տալիս պետք յեղած ազդեցությունն ունենալ համաֆրանսիական արհարժման դժի վրա, սակայն այդ պայմաններում քվեարկության ետևանքները կարող են հաճախ պատահական լինել՝ միությունների անդամների փոքրամասնությունը կարող է համադրված արժեքի մեծամասնությունն ունենալ<sup>\*)</sup> :

Ֆրանսիական արեշարժման համեմատական համախմբվածությունը, վոր վոչ միայն ըստ առանձին արհեստների և արտադրությունների Ֆեդերացիաներ ունի, այլև միջմիութենական կազմակերպություններ և ղեկավար համաֆրանսիական արհեստակցական գլուխ, բացատրվում է այն լարված կոլով ֆինանսական կապիտալի միացյալ ուժի և նրա կողմից ղեկավարվող վոստիկանական պետութայնի դեմ, վարունց հետ ստիպված ելին շարունակ գործ ունենալ 19-րդ դարի վերջի ֆրանսիական սինդիկատները :


Այստեղ անհրաժեշտ է նույնպես ուշադրության առնել այն հանդամանքը, վոր Ֆրանսիայում չկար պրոլետարիատի ուժեղ, քաղաքական հեղափոխական կուսակցություն, վոր կարող լիներ ղեկավարել բանվոր դասակարգի տնտեսական և քաղաքական կուռիվը : Մինդիկատները ժխտում էին սոցիալ-համաձայնականների արհեստակցական շարժումը ղեկավարելու իրավունքը, ժխտում ելին ընդհանրապես քաղաքական կուռիվը : Մինչդեռ կապիտալիստներին հականերգործելու համար այնուամենայնիվ անհրաժեշտ էր բանվորական շարժման հենակետեր ստեղծել, վորոնք գոնե մասամբ կարող լինեյին միացնել ֆրանսիական պրոլետարների բա-

<sup>\*)</sup> ԱՐԿ գլուխ և կանգնած կոնֆեդերալ կոմիտեն, վորի մեջ մտնում է մեկական ներկայացուցիչ ԱՐԿ մեջ մտնող ամեն մի կազմակերպությունից (Ֆեդերացիայից, սինդիկատից, բորսայից) : Կոնֆեդերալ կոմիտեն բաժանվում է յերկու հիմնական սեկցիայի—Աշխատանքի բորսայի սեկցիայի և սինդիկատները Ֆեդերացիայի սեկցիայի : Յերկուսն էլ ավտոնոմ են իրենց միջոցների անորինման գործում : Ամեն մի կոմիտե ընտրում է գործադիր բյուրո, ընդ վորում ԱՐԿ գլխավոր քարտուղարը սինդիկատների Ֆեդերացիայի սեկցիայի կազմից է ընտրվում : Ամեն 2 տարին մեկ սեպտեմբերին գումարվող ԱՐԿ կոնդերեսներում վճռական ձայնի իրավունք է տրվում միայն սինդիկատներին, իսկ սինդիկատների Ֆեդերացիաները և Աշխատանքի բորսաները միայն խորհրդակցական ձայնի իրավունք ունեն :

ժան-բաժան և ցրված ուժերը : Հենց այդ խնդիրն իրենց վրա վեր-  
ցրին միջմիութենական միացումները՝ Աշխատանքի Բորսաները և  
Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիան :

Իր ժողովրդական տնտեսութեան զարգացման, նույնպես և քա-  
ղաքական կալի ընդհանուր պայմաններին լիակատար համապա-  
տասխան, անգլիական արհեստակցական շարժումը համարյա ան-  
ծանօթ է միջմիութենական միացումներին : Այդ տեսակետից նա  
փրանսիականի լիակատար հակադրութիւնն է :

Անգլիայում վաղ են յերևան գալիս տեղական արհեստակցա-  
կան խորհուրդները, վորոնք միացնում են տվյալ քաղաքի կամ շր-  
ջանի արեղ-յունիոնները, բայց այդ խորհուրդներն ամենախղճուկ  
պրութեան մեջ են լինում : Տրեղ-յունիոնների կարևորագույն Փե-  
դերացիաները հենվելով իրենց ազդեցութեանը, ուղղակի բոյկոտի  
յեն յենթարկում նրանց : «Արհեստակցական Խորհուրդները» խառիվ  
հետաջվում են միութեանների քաղաքական և տնտեսական կյան-  
քից, չունեն վոչ միջոցներ, վոչ էլ տեխնիքական ապագարատ : Բայց  
այնուամենայնիվ Անգլիան արհարժաման ղեկավար կենտրոնի նը-  
ման մի բան ունի : Գլխազո քաղաքի արհմիութեանների խորհրդի  
նախաձեռնութեամբ 1864 թ. գումարվեց և 1879 թ. սկսած ճշտա-  
պահութեամբ ամեն տարի գումարվում է տրեղ-յունիոնների ան-  
գլիական կոնգրեսը : Կոնգրեսը կազմվում է 200 խոչորագույն միու-  
թեանների 600 պատգամավորից, այդ միութեաններն իրենց մեջ  
ունեն Անգլիայի արեղ-յունիոնների մեջ կազմակերպված բոլոր  
բանվորների մի ազգու մասը (85—90 տոկոս) : Կոնգրեսն ունի 12  
չրջանային սեկցիա և ընտրում է գործադիր որդան—պարլամեն-  
տական կոմիտե : Սակայն ընդ մին աչքաթող է արված մի փոքրիկ  
բան, վոր համաանգլիական կոնգրեսին զրկում է անհրաժեշտ նը-  
շանակութեանից : Բանն այն է, վոր այդ կոնգրեսի կանոնադրու-  
թեան համաձայն նրա վեհաժողովից վոչ մեկը պարտադիր չէ նրան  
մտնակցող միութեանների համար : Կոնգրեսի ընտրած գործադիր  
որդանը միայն մի խնդիր ունի՝ պարլամենտ և մայքնում որինա-  
զձեր կամ ձգտում, վոր այնտեղ բանվորների աշխատանքի պաշտ-  
պանութեան վերաբերող որենքներ (ընդվորում խիստ համեստ)  
ընդունվեն : Յեթե արեղ-յունիոնների ամենամյա կոնգրեսների  
այս նեղ իրավունքներին և խնդիրներին ավերացնենք նրա չնչին  
տեխնիկական ապագարատը և միջոցների պակասը, ապա կերևա վոր  
վերջնական հաշիվով նրա ամբողջ գերը միայն անգլիական արհ-



շարժման ուժերի ամենամյա գորատեսն ե կազմում, ամենամյա մի-տինդ կազմելը :

Գերմանական բանվորը 70—80—ական քվականների շրջանում ծանր ֆաղափական և տնտեսական կռվի մեջ փաշվելով, վաղ գիտակցեց արհշարժման բոլոր ուժերի միացման անհրաժեշտութիւնը : 1891 թ. ստեղծվում են միջմիութենական միացումներ (կամ, ինչպես նրանց անվանում են Գերմանիայում, կարտելներ) : 1893 թ. 252 կարտել կար, իսկ 1914 թ. 575 : Սակայն հենց այդ ժամանակ, 90—ական թվականներից սկսած, գերմանական արհշարժման արագ վերասերումը և թեքումը դեպի համաձայնողականութիւն (վար կապված եր ընդհանուր քաղաքական և տնտեսական պայմանների հետ, վորոնց մասին տես վերերը), խանգարում ե այդ բոլոր արհեստակցական կազմակերպութիւնների նշանակութիւնը : Միասնական ղեկավարող կենտրոն անհրաժեշտ ե ամենից առաջ հեղափոխական արհշարժմանը, վոր պրոլետարիատի քաղաքական կուսակցութիւն ղեկավարութիւնում միութիւն բոլոր ուժեր կռվի յն նետում կապիտալի գրոհի դեմ, վոր ձգտում ե հետագայում այդ կռիւիների մեջ խորատակել հենց կապիտալիստական կարգը, վոր կարողանում ե առանձին արտադրութիւնների և արհեստների միութիւնների շահերը յենթարկել ընդհանուր միութենական շահերին և վերջապես ընդհանուր դասակարգային շահերին : Իսկ գերմանական 1890—1914 թ. թ. շրջանի արհմիութիւնները, վորոնք ժխտում եին վոր միայն ընդհանուր գործադուլը, այլ ընդհանրապես գործադուլային շարժման ոգուտը, վոր ամենից ազգիի քիչ եյին մտադիր «հեղափոխութիւն անել», —այդ բոլորն իսկի պետք չեր : Հավաքական պայմանագրեր կնքել, ձեռնարկութիւնների հետ խաղաղ կերպով համաձայնութիւն գալ շատ ավելի հարմար ե ու պարզ առանձին արտադրութիւնների և արհեստների միջոցով, քան միջմիութենական կարգով : Գերմանական միութիւնների տեղական բաժանմունքների տնտեսական կռվի ամբողջ շեկավարութիւնն ամբողջովին մնում ե նրանց նահանգական բաժիններին և կենտրոնական կոմիտեյին : Գլխավոր հանձնաժողովի աշխատանքը սահմանափակվում ե արհմիութիւնների մեջ բանջարների նոր կազմեր քաշելու ազխտացիայով, վիճակագրութիւնը կարգի դնելով, մամուլի որգանի հրատարակումով, մյուս յերկրների հետ կապ պահպանելով : Պակաս համեստ չե նաև կարտելների դերը — ալյալ վայրի ընդհանուր արհմիութենական շահերի պաշտպանութիւնը (և խիստ պոչատ պաշտպանութիւնը), միութիւն-

Ներքի դործունեություն կարգավորումն աշխատանք գտնելու, վիճակագրություն և գրադարանային դործի աստղարիզում, աշխատանքը սոցալի աստղարիզում: Արհչարթման քիչ-չատ իրական դեկալարուքյան մասին, ըստ յերևույթին դժվար և խոսել:

Յուրորինակ և արհչարթման կազմակերպչական կառուցվածքը Միացյալ Նահանգներում: Վորակյալ բանվորների գրությունն աշխտեղ ավելի լավ և, քան Անգլիայում և Գերմանիայում: Համաձայնողականություն էլ ավելի ուժեղ: Սակայն Ամերիկայում արդյունաբերությունն այնքան միացած և և համակենտրոնացած, կապիտալիստների ուժը և նրանց գրոհը բանվոր դասակարգի վրա այնքան մեծ են, վոր բոլոր արհչարթմաններն ստիպված են հաճախ կատարի կտրվ մղել հանուն գոյություն իրավունքի: Ամերիկյան միություններն ստիպված էյին իրար հետ միանալ, ստիպված էյին մեկ միասնական ամբողջուքյան վերածել իրենց միությունները, վորովհետև առանց դրան ամեն մի, նույնիսկ համաձայնողական արհեստակցական աշխատանք անհնար կլիներ: Այդպիսով ստացվեց այն, վոր ամերիկյան արհչարթումը, վոր իր հիմքում կառուցված և ցրիվ յեկած համաքարային միությունների վրայ, այնուամենայնիվ բավական ուժեղ միասնական կենտրոն ունի—Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան: Ֆեդերացիայի գլուխն և հանդիսանում, աշխտեղ կոչված, վարչական հանձնաժողովը, վոր յաթանված և 5 սեկցիայի, վորոնցից 4-ը (չինարարականը, մետաղաբարդյունագործողը, հանքագործարանայինը և յերկաթուղայինը) արտադրական բնույթ ունին, իսկ հինգերորդ սեկցիան, յերկինը, ծառայում և յերեւ և բոյկոտ անցկացնելուն: Ա. Ա. Ֆ. հարող բոլոր միությունները պետք և վերելից մինչև 4. 4., մանեն համապատասխան սեկցիան և միայն նրա միջոցով Աշխատանքի ամերիկյան Ֆեդերացիան: Այսպիսով Միացյալ Նահանգներում մենք գործ ունենք վոչ միայն արհչարթումը վերելից ներքև միացնելու դործի հետ, այլև, թեկուղ մասամբ, այն արտադրական նշանին մտնեցնելու հետ: Սակայն այդ բոլոր շենքը նշանավոր չափով կառուցված և կավե հիմքի վրա: Պետք եր սկսել վոչ թե վերելից, այլ ներքևից և նախ ցրիվ յեկած արհեստակցական միություններն արտադրական նշանով վերաշինել: Իսկ Միացյալ Նահանգների հարյուրավոր միությունների ամենաբազմազան և շատ հաճախ իրար թշնամի շահերը Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիան իրոր ի վիճակի չէ միացնել: Ասենք նրա դեղին առաջնորդներն այդ մասին առանձնապես չեն և հոգում: Հեղեղներն այն և, վոր ԱԱՖ վեկա-

վար դերն ամերիկյան արհարժման մեջ նշանավոր չափով այն չե-  
ինչ վոր նա կարող եր լինել :

Ռուսաստանի արհեստակցական միությունների մասին մենք  
մանրամասն կը խոսենք իր տեղում : Այնուամենայնիվ նշենք, վոր  
նրանք հենց իրենց ծագման մոմենտից (1905 թ.) հիանալի հասկա-  
նարով բանվոր դասակարգի ուժերի համախմբման ամբողջ կարև-  
որությունը կապիտալի դեմ հաջողությամբ կովելու համար  
ձգտում են արհմիությունների համառուսական համագումար եր-  
բավիրել, արհարժման համառուսական կենտրոն ստեղծել : 1905—  
1906 թ. թ. նրանց հաջողվում է հրավիրել միայն արհմիություն-  
ները 1-ին և 2-րդ կոնֆերենցիան փոքրաթիվ մասնակիցներով,  
բայց 1917 թ. ստեղծվեց ՀԱՄԿԽ—Համառուսական Արհեստակցա-  
կան Միությունների Կենտրոնական Պորհուրդը, իսկ 1919 թ. մո-  
տերքը Պորհուրդային Ռուսաստանի հեղափոխական արհմիություն-  
ներն ստեղծում են իրենց կատարելությամբ ու տոկոսնությամբ  
արհեստակցական կազմակերպությունների մի ցանց, վորն ամ-  
բողջովին կառուցված են ըստ արտադրական սկզբունքի, տողոր-  
ված դեմոկրատական կենտրոնացումով և իրենց հիմքում հենված  
սկզբնական բջիջները—գործարկումների վրա, իսկ վերևում միա-  
ցած այնպիսի մի հզոր գեկավար կենտրոնով, ինչպիսին ՀԱՄԿԽ է :

**ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ** Համաշխարհային պատերազմը վեր-  
ՇԻՋԱՆ : ՀԵՂԱՓՈՈՍԿԱՆ Չացավ : Ավերված և արյունոտված  
ՎԵՐԵԼՔՆԵՐ ԱՆԳՒԻԱՅԻ Յեվրոպան, նրա հետ միասին նաև Ա-  
ԱՐ ՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մերիկան շնչատպառ ելին լինում ամե-  
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՄԵՋ : նաժանր կրիգիսի ճիբաններում : Մուչ-  
վում էլին կապիտալիստական կարգի  
հիմունքները, կտրուկ կերպով աճում եր խաբված ու այժմ աչքերը  
բացված բանվորա-գյուղացիական մասսաների վրդովմունքը, պարզ  
պատկերանում էլին խոշոր հեղափոխական վերելքները բանվորա-  
կան շարժման մեջ : Ինչքան ավելի յեր սրվում բանվորների դասա-  
կարգային կռիվը, ինչքան ավելի յեր հեղափոխականանում արհես-  
տակցական շարժումը, այնքան ավելի էլին մոտենում Արևմտյան  
Յեվրոպայի և Ամերիկայի արհեստակցական միությունները շինա-  
բարության արտադրական սկզբունքին, համախմբմանը, իրենց  
ուժերի միացմանը :

Վերցնենք թեկուզ Անգլիան : 1921 թ. նրա ժողովրդական տրն-  
սեւության դրությունը կատաստրոֆիկ եր : Աձուխի արգյունա-  
վերությունը, խողազ ժամանակի համեմատությամբ, համարյա

յերկու անգամ նվազել է, շուգունինը՝ հինգ անգամ, պողպատինը՝ մեկ և կես անգամ : 1921 թ. Անգլիայի հանք հալող բանվորների վա-  
տարանների համարյա հինգ վեցերորդը հանդած էր : 2—3 անգամ  
աշխատանքը կրճատեցին մանածագործական արդյունաբերու-  
թյունը և նավաշինարարութունը, համարյա յերկու անգամ սեղ-  
մըվեց առևտուրը, 1921 թ. վերջին գործազուրկների թիվը սար-  
սափելի չափերի հասավ—2,000,000 : \*)

Դասակարգային կռվի ամպերը հավաքվում են Անգլիայի վրա :  
Գործազուրկային շարժման ալիքը խոյանում է վեր, չեղած թափի  
հասնելով (1921 թ. 763 կոնֆլիկտ յեղավ 1,829,000 մասնակցողով  
է : 86 միլ. կորցրած որով) : Չնավորում էր և սկսում էր յեռուն աշ-  
խատանք ծավալել Անգլիայի յերիտասարգ կոմունիստական կու-  
սակցութունը : Իր կողմից անգլիական բուրժուազիան արդեն  
սկսում էր կազմակերպվել և նախապատրաստվել իր առաջիկա  
«կապիտալի հարձակման» համար\*\*):

Մինչև պատերազմ անգլիական արդյունաբերությունը համա-  
կենտրոնացած էր միայն միջին չափով. հսկայական ձեռնարկու-  
թյուններ, նման գերմանականին կամ ամերիկականին, նրա մեջ  
չստ թեչ կային : Այսպես, որինակ, 20-րդ դարի շեմքին անգլիա-

\*) Համեմատական թվերն այսպես են.—1913 թ. ածուխի ար-  
դյունաբերութունն Անգլիայում 292,1 միլ. տոնն էր, 1921 թ.—  
164 միլ. : Չուգունի հալումը 1913 թ.—10,4 միլ. տոնն, 1921 թ.—  
2,1 միլ. : Պողպատի արդյունահանությունը 1913 թ.—7,6 միլ.  
տոնն, 1921 թ.—2,8 միլ. : Անգլիայի 487 հանք հալող վառարան-  
ներից (գոմեններից) 1921 թ. միջին հաշվով աշխատում էր 77 :  
Նավաշինարանների 1913 թ. բաց թողած 5 միլիոն տոննի փոխա-  
բեն, առ 1-ն հունվարի 1922 թ. բաց է թողնված միայն 1,938,319  
տոնն : Բամբակի վերամշակումը 1921 թ. իջավ մինչև 1,197,000  
կիլոյի, այսինքն՝ նախապատերազմական մակարդակի 31 տոկոսը,  
իսկ նրա սպառումը մինչև նախապատերազմյան նորմայի 47,4 տո-  
կոսը (2,024 հազ. կիլո) : Արտաքին առևտրի մեջ 1921 թ. ներմու-  
ծումը կազմում էր նախապատերազմականի 65,4 տոկոսը, իսկ ար-  
տահանությունը—57,3 տոկոս : 1918 թ. գործազուրկները կազմում  
էին բանվորների ընդհանուր թվի 1,2 տոկոսը, իսկ 1921 թ. վեր-  
ջին—16,8 տոկոս (1,926,950 մարդ) :

\*\* ) Մանրամասն 1921—1923 թ. թ. կապիտալի հարձակման  
մասին տես 7-րդ գլուխը՝ «Մոսկվա և Ամստերդամ» :

կան ածխային արդյունաբերութեան մեջ 1,500 ինքնուրույն Փիրմա կար: Հետպատերազմական շրջանում բնականաբար կապիտալիստները ձգտում են այլևի մեծ միացումների, տրեստներն ու յինդիկատներն աճում են, ձեռնարկությունների միությունները սաղմունակությունն ուժեղանում է:

1921 թ. սկսած գործադուլների ալիքն Անդլիայում սկսում է լիջնել, սկսվող հեղափոխական շարժումը խանդարվում է սոցիալ-համաձայնողականների կողմից (այս մասին մանրամասն տես 7-րդ գլուխը՝ «Մոսկվա և Ամստերդամ»): Բացի դրանից հորիզոնի վրա պարզ նկատվում են արդեն մոտեցող նոր արդյունաբերական վերելքի նշանները (1922 թ. կիսից): Մակայն անդլիական արհեստակցական շարժումը հաշվի առավ հետպատերազմական կոլիդասերը: Ճիշտ է, դեղին առաջնորդների դավաճանությունը հուսախարություն առաջացրեց լայն մասսաների շարքերում, սկսվեց անդատվությունը դեղին արհմիություններից: Յեթե 1913 թ. Անդլիայում միությունները 4,670,000 անդամ ունեյին, իսկ 1921 թ. արդեն 8,024,000, այսինքն՝ յերկու անգամ ավելի, այս կարգի՛վ կոնդրեսում (1921) ներկայացված էին միայն 5,390,323 մարդ, իսկ 1923 թ. (Պլիմուս) և 1924 թ. (Հուլ) էլի մեկ միլիոն մարդ պակաս: Բայց մյուս կողմից, դասակարգային կոլի անկատակածելությունը, իր ուժերն ըստ հնարավորին ավելի լավ միացնելու անհրաժեշտությունը՝ միացող կապիտալին ընդդիմադրելու համար այն բանին հասցրին, վոր արագորեն մի շարք հզոր տրեդ-յունիոններ Փեդերացիա կազմեցին, սեղմվեցին, ձուլվեցին:

Մեքենաշինարարական բանվորների տաս միություն ձուլվելու ավելեցին 460,000 անդամով մի միություն: 1921 թ. սեպտեմբերին ձուլվեցին փոխադրողների 21 միություն: 1923 թ. սկզբին անվարժ բանվորների 3 խոշորագույն միություն ձուլվեցին, կազմելով մի հզոր կազմակերպություն 500,000 անդամով, միացան մանածագործների 15 միություն և այլն: Ընդհանուր առմամբ 1923 թ. դեռ 1296 առանձին տրեդ-յունիոններ կային, բայց նրանց ճնշող մեծամասնությունը միացած էր հզոր Փեդերացիաների մեջ, փորոնք խիստ մոտիկ էին ըստ արտադրութեան կառուցված կազմակերպություններին: այդպես էլին—փոխադրողները (400,000 մարդ), մեքենաշինարարները (460,000 մարդ), կառուցողները (400,000 մարդ), անվարժ բանվորները (900,000 մարդ), հանքափորները (900,000 մարդ), ծառայողները (500,000 մարդ,) մանածագործները (375,000 մարդ), մանածագործների ազգային միու-



թյունը (120,000 մարդ), սպազբիչները (200,000 մարդ), մտավոր և տեխնիքական արհեստների աշխատողները (250,000 մարդ) և այլն: Այս բոլորը զեռ արտադրական սկզբունքի իրագործումը չէ, բայց ս. յնուամենայնիվ խոշոր առաջադիմական քայլն է:

Միաժամանակ, վորոշ չափով աճում է միջմիութենական կազմակերպությունների նշանակությունը և ակտիվությունը: Այսպես, 1921 թ. Կարդիֆի կոնգրեսում ստեղծված տրեդ-յունիոնների գլխավոր խորհուրդը սկսում է ընտանյանալ այն կարևորագույն սկզբունքային հարցերի քննությանը, վորոնք առաջ են մղվում անդլիական և միջազգային արհչարժման կողմից (միասնական Փրոնտ և այլն), մասամբ ուժեղանում են նաև արհմիությունների տեղական խորհուրդները: Հենց անդլիական արհչարժման մեջ ձեռնարկվում է հեղափոխական փոքրամասնության շարժումը, վոր առաջ է զնում կոմունիստական կուսակցության լոգունդներով: Անդլիական հեղափոխականները զեղին միությունների ներսում աշխատելով, առաջին հերթին կռվում են համքարականության դեմ, հանուն հզոր արտադրական միացումների ստեղծման:

Արդյոք ուղտակար է անդլիական բյուրոկրատիային, արհեստակցական շինովնիկությանը համքարային միությունների ձուլումը.— հաճախ վո՛չ, հենց թեկուզ միայն այն պատճառով, վոր ձուլման ժամանակ միութենական ծառայողների շտապները բնականաբար կըճատվում են և արհեստակցական շինովնիկներին վտանգ է սպառնում իրենց տաքուկ, հին տեղերից զրկվել: Նրանց վտանգ է սպառնում տեղերից զրկվել նաև այն պատճառով, վոր սպատագրվելով համքարականություններից, արհեստակցական միությունները նշանավոր չափով ավելի ևս հեղափոխականանում են, ձեռք բերում այն մարտական վողին, վորից ամենից շատ են յերկյուղ կրում զեղին արհչարժման առաջնորդները: Ահա թե ինչու վերջինները մինչև այժմ կատաղի կերպով բնդդիմանում են արտադրական միությունների սկզբնավորմանը:

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՎԵՊատերազմից հետո Ամերիկան մի  
ԲԵԼՔՆԵՐՆ ԱՄԵՐԻԿՅԱՆ շրջան ապրեց, վոր շատ նման էր Ան-  
ԱՐԷՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ զբլիայի ապրածին: 1921 թվին ամերի-  
ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ ՄԵՁ: կյան արդյունաբերության դրությու-  
նը նույնպես չափազանց ծանր էր: Ա-  
րևմտա-յեվրոպական պատվերների կարուկ ընդհատումը, ար-

դրուներեության դեմօրրկիզացիան, Անդլիայի ձգտումը հետ դրավելու իր ասիական գաղութները, վոր նվաճել էր Ամերիկան պատերազմի ժամանակ, Հ.—Ա. Միացյալ Նահանգներում առաջ բերեցին ամենադաժան կրիզիս: Ածուխի արդյունաբերությունը 1918 թվի համեմատությամբ մինչև կես անգամ կըրճատվում է (իսկ նախապատերազմյան մակարդակից 10 տոկոսով ցածանում), շուգունի արդյունաբերությունը 2 է կես անգամ (1913 թվի համեմատությամբ 2 անգամ): Կանգ է առնում մանածակագործական ձեռնարկությունների մեծ մասը, սեղմվում է արտաքին առևտուրը, աճում է (ճիշտ է, կարճատև ժամանակով) Ամերիկայի համար չտեսնված դործադրկությունը (հասնելով մինչև վեց միլիոն մարդու)\*: Սակայն այստեղ էլ բուրժուազիան հաջող կերպով հեղափոխական դործադուլային շարժման բռնկման հետ հաշվները մաքրում է «Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի» դեղին առաջնորդների ակտիվ աջակցությամբ տապալվում է յերկաթուղայինների հոյակապ շարժումը, վոր առաջ էր դնում յերկաթուղիների ազգայնացման լողունդի տակ պողպատածուլական բանվորների կատաղի դործադուլը (4 ու կես ամիս դործադուլ էր անում 350,000 մարդ), հանքափորների դործադուլները: Իրան մեծ չափով նպաստում է այն հանգամանքը, վոր համաշխարհային պատերազմը քայքայելով Յելլոսպան, բնդհապառակը, Ամերիկային ուժեղացրեց: Ամերիկյան կապիտալիզմին հաջողվեց հիմնովին իր դործերը շտկել յելլոսպական մատակարարություններով<sup>2)</sup>: Այդ պատճառով Միացյալ Նահանգներն ավելի

\*) Այսպես, Մ. Նահանգներում արդյունահանված է (միլ. տոններով)

	1913 թ.	1918 թ.	1921 թ.
Ածուխ	516.0	685,4	448,0
Չուգուն	31,2	39,0	16,0
Պողպատ	31,8	45,2	16,8

1921 թ. հուլիսին՝ կրիզիսը գագաթնակետին հասած ժամանակ՝ 435 հանք հալող վառարաններից աշխատում են 60: 1921 թ. ոգոստոսի վերջին 36 միլ. իլիկից աշխատում էլին միայն 4,540 հազ: Արտաքին առևտրի պտույտը, վոր 1920 թ. կազմում էր 13<sup>1</sup>/<sub>2</sub> միլիարդ գոլլար, 1921 թ. իջավ մինչև 6 միլիարդի:

2) Մանրամասն տես 7-րդ գլուխը «Մոսկվա և Ամստերդամ»:

հեշտութեամբ են վտարել կանգնում արդյունաբերական կրթիսից, քան աշխարհի մյուս յերկրները :

Բանվորական շարժման այդ ջանքախմբան հետևանքով «Աշխարհի Արդյունաբերական բանվորները», վոր 1919 թ. 900,000 անդամ ունեյին, 1921 թ. ունեյին միայն 50,000: Ինչպես վար Անգլիայում, այստեղ ել դեղին արևիխուբյունները կորցրին իրենց անդամների նշանավոր մասը. յեթե 1913 թ. Միացյալ Նահանգներում միությունները 2,722,000 անդամ ունեյին, իսկ 1921 թ. — 4,945,528, վորից Աշխատանքի Ամերիկյան Ֆեդերացիայի կազմի մեջ մտնում էյին 3,906,258 անդամ, ապա Ա. Ա. Ֆ. 1923 թ. հոկտեմբերին Պորտլանդի կոնգրեսում ներկայացված էյին ընդամենը միայն 2,926,000 անդամ, այսինքն նույնպես մեկ ամբողջ միլիոնով պակաս: Բնական է, վոր Ամերիկայի դեղին հզոր արհեստակցական բյուրոկրատիայի ցույց տված զիմազրությունը, վոր համարային միությունները ձուլվելով կազմեն արտադրական միություններ, ել ավելի ուժեղ եր Միացյալ Նահանգներում, քան Անգլիայում և հետագաերագմական վերելքների հետևանքներն ամերիկյան արհեստակցական միությունների մեջ շատ ավելի քիչ էյին: Այնուամենայնիվ կարելի յե յեղել վորոշ և բավական նշանավոր հաջողություններ ունենալ: Արհշարժման հեղափոխական փոքրամասնության կազմակերպությունը կազմեց «Արհեստակցական պրոպագանդայի լիգա», վորի ղեկավարներն էյին կոմունիստները (հասկապես Վ. Փոստերը): «Լիգայի» աշխատանքը մի շարք ամերիկյան արհմիությունների մեջ լայ պտուղներ տվեց: Յեթե 1922 թ. աշնանը «Լիգան» ընդամենը միայն 20,000 անդամ ուներ, իսկ իր սղղեցությունը տարածում եր 400,000 մարդու վրա, ապա 1923 թ. «Լիգային» հարեցին 11 Աշխատանքի Ֆեդերացիա և 800 ինքնուրույն միություն և ներկայումս «Լիգան» իր աշխատանքով ընդգրկել և հարյուր-հազարավոր ամերիկյան բանվոր: Ճիշտ է, «Լիգան» դեռ չի կարողացել բավական ամուր կազմակերպություններ ստեղծել, վոր կարող լինեն յիսկին ղեկավարել ամերիկյան արհմիությունների հեղափոխական մասի գործունեյությունը, բայց այնուամենայնիվ ամերիկյան արհշարժման մեջ «Լիգան» խոշոր յերևույթ է: Կասկած չկա, վոր չնայած համաձայնողական առաջնորդների բոլոր ղիմադրությանը, արհմիությունների կարմիր ինտերնացիոնալի մեջ մտնող «Լիգայի» հետագա աշխատանքն ամերիկյան արհմիություններն ել ավելի կը մտանցնի արտադրական սկզբունքին:

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ Բայց հատկապես կարուկ վերելք-  
վերելֆներ Գերմանիայի և Երևանի գերմանական արհար-  
հան ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ- ժուժը :

ՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԻ Գերմանիան շնչասպառ էր լինում ,  
ՄԵՋ : ՀԵՂԱՓՈՑԱԿԱՆ խեղդված վերայլի դաշնագրով .  
ԳՈՐԾԱՐԿՈՄՆԵՐ : կողոպտված Անտանտայից : Դես  
մինչև Ռուսի գրավումը , նա կորցրեց իր տերիտորիայի  
մեկ ութերորդ մասը և բնակչության մեկ տասերորդը : Կա-  
րևորապես արտադրութունների կորուստներն այս են .— քարա-  
ծուխ՝ 25,9 տոկոս , յերկաթահանք՝ 74,5 տոկոս , ցինկ՝ 63,8 տո-  
կոս , ցորեն և համար՝ 16,7 տոկոս , կարտոֆիլ՝ 18 տոկոս և այլն :  
Գերմանիայի արտաքին առևտրի համարյա ամբողջ ապագրատը  
խորտակվեց , վորովհետև նրանից խլեցին իր առևտրական տորմի-  
դի 89,4 տոկոսը , նրա արտաքին առևտրի մեջ 1921 թ . ներմուծու-  
մը կազմում էր 1913 թ . ներմուծման 36,3 տոկոսը , իսկ արտահա-  
նութունը՝ 28,5 տոկոս : Ռեպարացիաների հաշվին (այսինքն վը-  
նանների հատուցման հաշվին) Գերմանիան Անտանտին վճարեց  
մի չլաված գումար , 57 միլիարդ վոսկի մարկ (առ 1-ն հունվարի  
1923 թ .) , վոր միայն ե՛լ ավելի գրգռեց դաշնակիցների ախորժակ-  
ները : Բայց չնայած գերմանական արդյունաբերության հիմքը—  
չուգունի և պողպատի արդյունահանութունը—կարուկ կերպով  
բշացավ \* ) , ամբողջ արդյունաբերութունը (մինչև 1922 թ . աչ-  
նանային ամիսները) յերևութական ծաղկման շրջան էր ապրում :  
Գործարաններն ու ֆաբրիկաները բնանավորված էին լրիվ կեր-  
պով , գործադրկութուն չկար :

Սակայն այդ բոլոր բարորութունը իրոք փքուն էր : Բանն այն  
է , վոր Անտանտայի ահապին վճարումների պատճառով , վորոնք  
յեկրից քաջում էին վոսկին ու այլ արժեքները և ուժասպառ անում  
նրան , գերմանական մարկի գինը խիստ ընկավ : Աշխատավարձը  
չէր հասնում թանկության աման հետևից , և կապիտալիստներն  
այդ տարբերության շնորհիվ շահվում էին : Գերմանական ապ-  
րանքները շարունակ կտանանում էին նաև այն պատճառով , վոր  
պետութունն ինքը վնասով փոխադրում էր ապրանքները և այդպի-  
սով ոգնում , վոր կապիտալիստները շահվին : Վալյուտայի ան-

\* ) 1913 թ . Գերմանիայում արդյունահանված և չուգուն—19  
միլ . տոնն , իսկ 1921 թ . — 7,5 միլ . տոնն , պողպատ 1913 թ . — 18,6  
միլ . տոնն , իսկ 1921 թ . — 9 միլ . տոնն :

կումը գերմանական ապրանքներն ավելի եփանացնում եր արտասահմանի ապրանքներից: Այդ նպատում եր նրանց լաճն արտահանութեանը համաշխարհային շուկա և բեռնավորում եր արդյունաբերութեանը: Բայց մյուս կողմից Գերմանիայի ներսում աղբյուրային սող եր թագավորում, վորովհետև գերմանական բանվոր դասակարգը և ընդհանրապես բնակչութեան ստորին շերտերն այնքան աղքատացել եյին, վոր չեյին կարողանում գնել նաև գերմանական այդ եփան ապրանքները: Թղթե մարկերով հսկայական փաստակներ ստանալով, գերմանական կապիտալիստները փաստապես ավելի քիչ եյին ստանում, քան պատերազմից առաջ: Կապիտալի կուտակումն ընդհատվել եր, արդյունաբերութեանն աղքատացել: Բացի այդ, նշանավոր չարիով կրճատվել եյին տեխնիկական դատարելադործութեանները, բանվորական ուժը չափազանց եփանացել եր և կապիտալիստը գերազասում եր թանկ նստող նոր մեքենաներ մտցնելու փոխարեն, ուղղակի ավելի շուտ չահագործել իր կենդանի ուժը, իր բանվորներին. իսկ մեքենաները պատերազմի ընթացքում մաշվել եյին: Բանվոր դասակարգի մեջ չահագործումը սուր դժգոհութեան և առաջացնում, հեղափոխական խռովում, նաև առաջ եր բերում աշխատանքի արտադրականութեան անկում: Այդ պատճառով զարմանալի չե, վոր Գերմանիայում տաք դասակարգային կռիւներ են տեղի ունենում, հեղափոխական ալիքի թռիչքը յերբեմն շատ բարձր կետերի յե հասնում, ինչպես 1919 թ. հունվարի դինոված ապստամբութեան, 1921 թ. կիսի հեղափոխական կռիւների ժամանակ: Առաջին անգամ կոմունիստական կուսակցութեանը զարգանալով դառնում ե մի հզոր ուժ:

1923 թ. Ռուրի գրավումը, վոր Գերմանիային հասցրեց լիակատար ժողովրդա-անտեսական կատաստրոֆայի ծայրին, վոր վերջնականապես գերմանական մարկը թեք մակարդակի վրա դրեց, գերմանական բանվորի դրութեանն անտանելի դարձրեց<sup>\*)</sup>: Գրութեան ծանրութեանը կրկնապատկում եր նաև այն բանով, վոր գերմանական բուրժուազիան սցիալ-համաձայնողականների բարեհաճ անկացութեամբ յեռանդալին գերմանական բանվոր դասակարգի վրա յեր դարսում ավերմունքի և վճարումների բոլոր ծանրութեանները: 1923 թ. աշնանը Գերմանիան բանվորական

<sup>\*)</sup> Վերջնական հաշվով, Ռուրի գրավումից հետո, Գրմանիայի կորուստները կազմում եյին՝ ամբողջ տերրիտորիայի 13 % բնակչութեան—20 %, ամուրի ամբողջ արդյունահանութեան—

ապստամբությունների բոցերի մեջ է, Գերմանիան հոկտեմբերի նախօրյակին է: Սակայն առայժմ գերմանական բանվոր դասակարգին չհասջողվեց հաղթել:

Յեւ պետք է արդարացի լինել գերմանական մենշևիկների և սրհաստակցական բյուրոկրատների վերաբերմամբ. նրանք թե պատերազմական և թե հետպատերազմական շրջանում վոչ թե վախից դրդված, այլ խղճատանքով աշխատում էյին արհմիությունների միջոցով խեղդել բանվորական շարժումը: Յերբ կոմունիստները և ամենից ավելի դիտակից հեղափոխական բանվորների մի գործաթիվ մասը վոչ թե կյանքի, այլ մահի համար կռվում էյին գերմանական բուրժուազիայի դեմ և՛ 1919 թ., և՛ 1921 թ., և՛ 1923 թ. աշանը,—տցիալ—համաձայնողականները, միութեակաւ ապգնորդները, կարլ Լեգինը և քնկերները, աշխարհ աջակցում էյին հակահեղափոխությանը գործադուլները խափանելով, կազմալուծելով բանվորական ապստամբությունները, ոգնելով բուրժուազիային, վոր ամեն կերպ հեղափոխականների և, ի հարկե, առաջին հերթին կոմունիստների հետ իր հաշիվը տեսնի:

Այնուամենայնիւ 1918 թ. գերմանական հեղափոխությունը խթան հանդիսացավ արհշարժման մեծ կազմակերպչական ձեւափորմանը և միացմանը: Վոչ միայն չափազանց աճեց Գերմանիայի արհմիությունների անդամների թիւը (մինչև պատերազմ նրանց թիւը 4 միլիոն եր, իսկ 1921—1922 թ. 13 միլիոն), այլև առաջվա,

85 % , յերկաթի և պողպատի—80 % , ցինկի հանքանյութի—68 % , ցորենի ցանքսի տարածության—16 % , կարտոֆիլի ցանքսի տարածության—18 % , շաքարի ճակնդեղի ցանքսի տարածության—20 % և այլն:

Ածուխի սուր սովը հարկադրում է թանկ ածուխ ներմուծել Անգլիայից, կալվածատերերի (ինչպես նաև Անտանտայի) հնամտաակ կառավարությունը վերացնում է հացի մասնատրումը ( բաշբերտեա ), դները բարձրանում են, աճում է թանկությունը. յերկաթուղիները և՛ չեն դիմանում գերմանական ապրանքների փոխադրության ահադին դեֆիցիտին: Ապրանքներն արագ թանկանում են և դրան համապատասխան նրանց պահանջն արտասահմանում ընկնում է: Վրա յե հասնում արգյունարբության ծանր կրիզիս: Կտաղի աճում է գործազրկությունը: Գերմանական բանվորի իրական աշխատավարձը 1922 թ. մարտից մինչև 1923 թ. սեպտեմբեր 6 անգամ ընկնում է:

բազմական թույլ, գլխավոր հանձնաժողովը 1919 թ. հուլիսին նյութերը գեղեցիկ կոնգրեսում վերակազմվեց, վերածվելով Արևիկա-բյուսնեքի Ընդհանրական Գերմանական միացման, մեծ իրավունքներով ու իշխանութամբ: Արհաշարժման այս նոր կենտրոնի ամբողջ հզորությունը գեղին առաջնորդներն ամբողջովին սպառածուծում են արհմիութենաների մեջ հեղափոխական «խռովությունը» արմատախիլ անելու, կոմունիստներին հեռացնելու և թշնամացնելու համար և այլն:

Սակայն գերմանական արհաշարժման ներսերից իբրև հակա-կշիռ փթած սեֆորմիստական միութենաներին, աճում էլին բանվորների ստորին կազմակերպությունները—հեղափոխական գործարկումները: Ճիշտ է, 1920 թ. փետրվարի 4-ի որենքը թույլատրեց գործարկումների կազմակերպումը, բայց միևնույն ժամանակ նշանավոր չափով խուզում էր նրանց իրավունքները: Այսպես, որինակ, հատուկ կետով գործարկումները պարտավորվում էին «պահպանել ձեռնարկությունները ցնցումներից», աջակցել վարչությունը աշխատանքի նոր մեթոդներ մտցնելիս. ձեռնարկումների հետ միատեղ նրանք պետք է հաստատելին ներքին կարգի կանոնները և այլն: Բանվորների վարձման և արձակման հարցերին գործարկումների միջամտությունը չի թույլատրվում, արտադրություն վրա բանվորական վերահսկողություն մասին հիշատակություն էլ չկա: Սակայն չնայած այդ բոլոր կապանքներին, գործարկումները կոփվելով ձեռնարկումների դեմ մղվող անմիջական կռիվում, շատ հեղափոխականացան և գնացին կոմունիստների հետևից: Գերմանա-

Ռուրի գրավումից «տուժած» աճուխի և յերկաթի «բարոնները» միտիթարվում են կառավարությունից ահապին նյութական ուժանդակություն ստանալով: Այդ ժամանակ Գերմանիայի բյուրջեն մի անընդհատ ճեղք և դառնում (1923 թ. սոստոսի վերջին յեկա-ժուտը ծածկում է միայն յեղքի 0,7): Արդյունաբերողներն ընդամին ճարպիկությունը հարկային բեռի ամբողջ ծանրությունը գրչում են բանվորների և ծառայողների վրա: (Այսպես, որինակ, 1923 թ. սոստոսին բանվորներն ու ծառայողները վճարում էին կարևորագույն յեկոմտային հարկի ամբողջ գումարի 93 %): 1923 թ. աշնանը վրա հասավ լիակատար Ֆինանսական կրախ, վրա կըրկնապատկվում էր արդյունաբերողների չարամիտ սպեկուլյացիաներով. 1923 թ. գոլլարի արժեքը արելին մարկերով էր հարվում:

կան արհաւիրքի արձագանքները և հարկի արտանայնիւթի զարգացումը և փորձեցին գործարկումների շարժումն ուղղել դեպի մենչևիկյան հունը, յենթարկել նրանց իրենց աղքատությանը: Սակայն այդ նրանց չի հաջողվում: Գործարկումների արդեն յերկրորդ համադերմանական կոնգրեսը (1922 թ. նոյեմբերին), վարակող ներկայացված էյին 3 միլիոն բանվոր, վճռականորեն կապերը խզում և ռեֆորմիստներին հետ: Կոնգրեսում ընտրված Գործարկումների Համադերմանական Կենտրոնական Խորհուրդը, Կամունիստական կուսակցության ղեկավարութեամբ, Գերմանիայի մասսայական բանվորական շարժման կազմակերպիչ հեղափոխական կենտրոնն է գտնուում: Չի ոգնում վոչ ռեֆորմիստների կողմից գործարկումների դեմ հարուցած կատաղի թշնամանքը, վոչ էլ գեղին առաջնորդների կողմից հարյուրավոր հեղափոխական գործարկումներին միութեյուններից հեռացնելը: Ղերմանական գործարկումները սոսկուն կերպով հսկում են հեղափոխութեանը: Նրանք են, վոր վերահսկիչ հանձնաժողովներ կազմակերպեցին ռեակցիայի, թանկութեան դեմ կովելու համար, նրանք ստեղծում էյին սրբաբարեկամ կարմիր հարյուրակներ Ղերմանական Փաշիզմի դեմ կովելու համար. նրանք Գերմանիայում ամեն մի մասսայական հեղափոխական շարժման թազան էյին հանդիսանում և հենց նրանք էյին անխորիփ կերպով գնում բոլորի առաջից զինված ապստամբութեյունների լայն ալիքներին միջով:

Սակայն գործարկումների աշխատանքին բավականաչափ ուշադրութեյուն չկարձնելն անդրադառնում է բանվորական շարժման վրա: Այսպես, 1923 թ. աչնանը Ղերմանական բանվոր դասակարգի կրած սպարութեյունը նշանավոր չափով բացատրվում է նրանով, վոր Ղերմանական կոմկուսին չհաջողվեց իր ժամանակին հավաքել ու ողտագործել հեղափոխական գործարկումների ուժերը: Այդ սրբալիները ներկայումս ուղղվում են: Գերմանիայի կոմկուսակցութեյունը, վոր ծանր կոխվելուում ձեռք բերեց իսկական բայլեիկյան դիմացկունութեյուն, շարունակ ավելի ամուր և ավելի ուժեղ է Ղերմանական գործարկումներին: Այն ժամանակ, յերբ Գերմանիայի գեղին արհաւիրքեյուններն անլեղորեն քայքայվում են (վոչ միայն վորակապես, այլև քանակապես. 1922 թ. համեմատութեյամբ նրանց թիվը քչացավ վոչ սակաս քան 2—3 միլիոն մարդով), Ղերմանական ամեն մի գործարկում, կոմունիստական կուսակցութեյան ղեկավարութեյամբ, գտնուում է ապագա Ղերմանական հսկումների իսկական ամբողջ:



**ՀԵՏՊՈՍՏԵՐԱԶՄԱԿԱՆ** Հաղթական Փրանսիան, վոր իմպե-  
 ՎԵՐԵԼԻՔՆԵՐ ՅՐԱՆՍԻԱ- բրախիտական ծունկը դրել է կիսա-  
 ԿԱՆ ԱՐՀՅԱՐԺՄԱՆ ՄԵՋ: Խեղդ Գերմանիայի կոկորդիլն, վոր  
 միացրել է իրեն այնպիս «համեղ պատանոնք», ինչպիսին են  
 ելլաւ-Լոթարինգիան և յերկաթի ու ամուխի հարստաղույն  
 Ասարի ավազանը, ընդհանուր արդյունաբերական կրիդիսը համե-  
 մատարար հաշուությամբ տարալ քան Յեյրոպայի մնացած յերկըր-  
 ները\*): Այնուամենայնիվ 1919—1920 թ. թ. Փրանսիայի համար  
 ուժեղ ցնցումների տարիներ էլին, վորոնք 1920 թ. կիսին հեղափո-  
 րական կրիդիսի հասցրին. մայիսին բռնկվեց յերկաթուղայինների  
 հոյակապ գործադուլային շարժումը. ամբողջ յերկրում տենդային  
 նախապատրաստություն էր տեսնվում ընդհանուր գործադուլի  
 համար:

Բանվորական շարժման ջախջախումը, շնորհիվ ունիտարմիտ-  
 ների հերթական դավաճանության, վորոնք խափանեցին յերկա-  
 թուղայինների շարժումը, վճռականապես հեղափոխականացրեց  
 մասսաներին: 1920 թ. դեկտեմբերին կազմակերպվում է, իսկ 1922  
 թ. վերջնականապես ամբանում և կոփվում է Փրանսիայի կոմու-  
 նիստական կուսակցությունը, վոր հեղահետե խոշոր ազդեցու-  
 թյուն է ձեռք բերում բանվորական լայն մասսաների վրա: Արհես-  
 տակցական շարժումը, վորի մեջ հեղափոխական վերելքներն սկըս-  
 վել էլին դեռ պատերազմական շրջանում, նույնպես արագ սկսում  
 է ձախանալ: Գերմանիայի կատաղի կոիվը կարմիրների դեմ  
 շարունակ ավելի անհաջող է դուրս գալիս: Նախատեսնելով, վոր

\*) 1919—1920 թ. թ. կրիդիսը վոչ միայն հատկապես սուր ձե-  
 վեր չընդունեց, այլև 1921 թ. բավական արագ վերջացավ: Այս-  
 պես, որինակ, արդյունահանված է (հաղար մետր. տոնն) .

	Ածուխ	Չուգուն	Պողպատ
1913	40,844	5,207	4,687
1919	31,831	2,412	2,186
1920	35,710	3,250	3,000
1921	36,486	3,400	3,100
1922	43,300	5,100	4,500

ձիշտ է, պետական պարտքը 1921 թ. հասավ մինչև 200 մի-  
 լիարդ Ֆրանկի (ընդդեմ Գերմանիայի 190 միլիարդ Ֆր. պետ-  
 տարտքի). 1921 թ. Ֆրանկը րնկավ 4,6 անգամ. բյուջեն անընդ-  
 հատ դեֆիցիտ ունի:

մաս ժամանակում կոմունիստներն ամբողջովին կնվաճեն արհարծումը և համաձայնողականների ազդեցութունը չնչին կլինի արհմիությունների ղեկին առաջնորդները դիտակցարար պառակտում առաջացրին, միայն թե իրենց տեղերը կարողանան պահել :

Հետևանքն այն եր, վոր բանվոր դասակարգի վրա Ֆրանսիայի կապիտալի հարձակվելու տաք պահին (1921 թ. վերջին), Ֆրանսիայի արհմիությունները ճեղքված եյին յերկու բանակի, ղեկին Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիայի (250,000 անդամ) և հեղափոխական Աշխատանքի Ունիտար (միացյալ) Կոնֆեդերացիայի (350,000 անդամ), վոր 1922 թ. միացավ Պրոֆինտերնին (Սենտ-Եսայենի կոնդրեսում) :

Այդպիսով Ֆրանսիական բանվոր դասակարգի կռիվը կապիտալիստների դեմ բավական ծանր պայմաններում և տեղի ունենում : Մի կողմից, Ֆրանսիական բանվոր դասակարգի կազմակերպվածութունը չնչին եր : Մինչև պատերազմ արհմիությունների անդամների թիվը 1,064,000 եր (1922 թ.), (այսինքն՝ Ֆրանսիայի ամբողջ բանվոր դասակարգի 16 %), 1920 թ., գործադուլային կռիվ տաք պահին Աշխատանքի Ընդհ. Կոնֆեդերացիան արդեն 2 միլիոն անդամ ուներ : 1921—1922 թ. թ. բանվոր դասակարգի պարտության և համաձայնողական—առաջնորդներից հուսալավելու շնորհիվ, տեղափոխությունը ղեկին սինդիկատներից խիստ ուժեղ եր. սինդիկատներում մնաց վոչ ավելի, քան 600,000 անդամ (այսինքն Ֆրանսիայի բանվորների ամբողջ թվի մինչև 10 տոկոս) : Վերջապես այդ փոքրիկ կազմակերպված մասսան ցրիվ յեկավ, կիսվեց յերկու մասի :

Պատերազմի վերջնալուց անմիջապես հետո, դասակարգային կռիվ սրվելու և համախմբված կերպով կապուալիստների դեմ դուրս դալու անհրաժեշտության հետ կապված, Ֆրանսիական արհեստակցական շարժումը մի շարք լուրջ քայլեր արեց ղեպի կենտրոնացում, նույնպես և ղեպի արտադրական սկզբունքի ուժեղացումը միությունները մեջ : Մի շարք ցրիվ յեկած համքարային միություններ կազմեցին հզոր արտադրական միացում (փայտագործները, փոխադրողները և այլն) : Արհեստակցական և արտագրական ֆեդերացիաների կանոնադրություններն ել փոխվել սկսեցին, նեղացնելով տեղական սինդիկատների իրավունքները : Ֆեդերացիաների կենտրոնական որդանները նշանավոր չափով ավելի շատ լիազորություններ ստացան, վորոնք թույլ եյին տալիս նրանց ղեկավարել սինդիկատների աշխատանքը և, վերջիններե

կենարոնի վճիռները չենթարկվելու դեպքում, նույնիսկ հետագանել նրանց Ֆեդերացիայից: Ապա, դեռ 1918 թ. Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիան Փարիզի կոնգրեսում այն ձևով վերահազմվեց, վոր նրա գործադիր օրգաններն սկսեցին իրենց կազմի մեջ մտցնել սինդիկատների Ֆեդերացիաների և Աշխատանքի Բորսաների ամենապատասխանատու ներկայացուցիչներին: Ապա Ա. Ը. Կ. պլենումի կազմից ընտրվեցին 30 մարդ, վորոնք կազմեցին ղեկավար պրեզիդիումը (վարչական հանձնաժողովը), վոր միշտ Փարիզում և գտնվում: Այդ մոմենտից Ա. Ը. Կ. նշանակութունը իրրև Փրանսիական արհարարական իսկական կենարոն, նշանակութուն, վոր առավել քիչ չէր, այժմ չափազանց ուժեղանում և և նշանավոր չափով մտտենում և մեր ՀԱՄԿԽ նշանակութունը:

Պատկառումից հետո, ինչպես Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիան, այնպես էլ Աշխատանքի Ունիտար Կոնֆեդերացիան պահեցին իրենց կառուցվածքի կենտրոնացումը և, ամեն մեկն ըստ իր գծի, կազմակերպչական տեսակետից քիչ փոխվեցին. Սակայն չնայած կոմունիստների և հեղափոխական սինդիկալիստների սկսած կատաղի կռիվին, առայժմ չհաջողվեց ամենադիտարներ իրագործել: Չհաջողվեց ձուլել յերկու կոնֆեդերացիաներն այնպես, վորպեսզի վոչնչացվեր գեղին առաջնորդների ազդեցութունը, Փրանսիական կապիտալին հակադրել հեղափոխական բանվորական կազմակերպութունների միացյալ հզորութունը: Վերևից միանալու փոխարեն, ստիպված ելին մասսաների միացման և նվաճման ճանապարհներ վորոնել ներքևից—Կերմանիայի օրինակով—գործարկումներ կազմակերպելու միջոցով:

1920 և 1921 թ. թ. գործարկումներ ստեղծելու վործերը հաջողութուն չունեցան, վորովհետև դրան վճռականապես ընդդիմացան ուժեղ միտները, բացի այդ Փրանսիայի ժողովրդական տրետեսութուն կացութունը բավականաչափ չէր նպաստում այդ բունին: Սակայն 1923 թ. գործերի դրութունը փոխվում և: Պատերազմից հետո Փրանսիական մետաղագործութունը հսկայական չափերով զարգացավ շնորհիվ այն բանի, վոր Փրանսիային միացվեցին յերկաթահանքով հարուստ շրջանները: Բայց այնուամենայնիվ գրավված վայրերում ամուխ բավականաչափ չգտնվեց: Աժուրի համար կռվելով, Փրանսիան դիմում և Ռուրի ալմանալարային, մտքում դնելով կոքս ձեռք բերել Փրանսիական սվինների սցնութունը: Սակայն Ռուրի գրավումը շատ ոգտակար դուրս չեկավ, իսկ գրավող (ոկուպացիոն) գորքի պահելու, անընդատ սպառա-

դինձան ծախքերը և այլն, — շատ մեծ դուրս յեկան: Ֆրանսիայի պետական ֆինանսներն սկսեցին չարագուշակորեն ճարձատել, ֆրանկը 10—15 անգամ ընկավ: Նույնիսկ այն դեպքում, յիժև հաջողվեւր Գերմանիայից կորզել այն ամենը, ինչ վոր նա պետք է վրձարի ըստ Վերսալի պայմանագրի, այնուամենայնիվ Ֆրանսիայի դրությունը չէր լավանա, վորովհետև Ֆրանսիայի պարաքերի դումարը Անգլիային և Միացյալ Նահանգներին նշանավոր չափով բարձր են, քան Գերմանիայից սպասվող բոլոր վճարումները\*): Մի կախարդական շրջան և ստացվում, վոր ուժեղ կերպով սրում է Ֆրանսիայի ներքին դրությունը 1923—1924 թ. թ.: Պատերազմը, Բանկոտթյունը, պետական ֆինանսների անկայունությունը և այլն նպաստավոր հող են ստեղծում գործարկումների շարժման համար: Սկսելով մետաղադորձական արդյունաբերությունից (1923 թ. մարտին կայացավ Սենայի դեպարտամենտի, այսինքն՝ ըստ եյության Փարիզի մետաղադորձական արդյունաբերության գործարկումների ստաջին համադումարը), գործարկումների համադումարները ծավալվում են ժողովրդական անտեսության շարունակ նորանոր շրջանները: Այսպես, 1923 թ. դեկտեմբերին ձեւավորվեցին Հյուսիսային Ֆրանսիայի մանածագորձական արդյունաբերության գործարկումները, 1924 թ. փետրվարին—Արդենի ավազանի և Հյուսիսային ավազանի լեռնային արդյունաբերությունը և այլն:

Ամբողջ 1924 թ. ընթացքում և 1925 թ. սկզբին Ֆրանսիայում գործարկումների շարժումը շարունակ ավելի լայնանում է: Կոմունիստական կուսակցությունը, վոր շարունակ ավելի յե ուժեղացնում իր ազդեցությունը սինդիկատների մեջ, միացնում է Ֆրանսիայի ճեղքված բանդոր մատային գործարկումների չաղախով:

\* )

Ֆրանսիական պասսիվը	Ֆրանսիական ակտիվը
ա) Միացյալ Նահանգների պարտքը 13 միլիարդ վոսկե մարկ, 25 տարի մամկնտով տարեկան 4 1/2 % վճարով . . . . . 876.000.000	Ամեն տարի Գերմանիայից ստանալու յե Գերմանիայի տարեկան վճարի 3 միլիարդ վոսկե մարկի 52 % (յենթադրելով, վոր Գերմանիան լրելվ կերպով կը վճարի բոլորը) . . . . . 1.560.009.000
բ) Ֆրանսիայի պարտքը Անգլիային 11,6 միլիարդ վոսկե մարկ, 25 տարով, 4 1/2 % . . . . . 781.000.000	դեֆիցիտ . . . . . 97.000.000
տարեկան 1.657.000.000	

Հենդելով հեղափոխական գործարկումների վրա, կոմկուսակցութիւնը և հեղափոխական սինդիկատները կկարողանան մոզ ժխայն դեղին առաջնորդ-համաձայնողականների վտտքի տակէ հողը վտրել, այլև ապագա հեղափոխութիւն հուսալի պատվար դառնար :

Ճրանտիայում գործարկումները շարժումը դեռ այնպիսի թափ չի ստացել, ինչպես Գերմանիայում : Արեւմտա-յեմբողական և ամերիկյան յերկրները մեծամասնութիւն մեջ արհաւիրման արտադրական սկզբունքի վերջնական հաղթանակը դեռ շատ հեռու յե : Ստիւտտ արհաւիրումները անխուսափելի յե : Նույնիսկ այն բանից հետո, յեր անցել և 1920—1921 թ. թ. համաշխարհային սուր արդիւնաբերական կրիզիսը և աշխարհի բոլոր յերկրներում ժողովրդական տնտեսութիւնը կարծես վերելքի ճամբա յեր բռնել, նրա դրութիւնը, ընդհանրապես ու ամբողջովին առած, շարունակում և ծանր մնալ : Ողբի մեջ առաջվա նման վատտղի հոտ կա : Համաշխարհային կապիտալիզմի արտադրական ուժերը վնասված են, սակայն սպառազինումը տեղային տեմպով և առաջ գնում : Նույնիսկ նախկին «դաշնակիցները» (Անտանտայի բանակից) իրար վրա ստամ են կրճատցնում : Մահացու վերավորված համաշխարհային իմպերիալիզմի նեխումն անչեղորեն շարունակվում և, թեկուզ և արտաքին բարորութիւն գիծակի տակ : Բայց դրա փոխարեն անչեղորեն աճում և բանվորական շարժումը, բայցևեկիցսող կոմկուսակցութիւնների ղեկավարութիւնը, կազմակերպվելով և դորա-ժողովելով իր բոլոր ուժերն առաջիկա նոր հսկայական կոիվներէ համար ընդդեմ կապիտալի : Յեվ յեթև աշտպես և, ապա անչեղորեն առաջ և գնում և առաջ կերթա բանվոր դասակարգի ուժերի լավագույն հզոր արտադրական միութիւնների և ամուր հեղափոխական գործարկումների ստեղծման գործը :

Բայց, իհարկէ, ամենամուր, հաճախ վճռական դեր արհեստական շարժման և նրա միջոցով ամբողջ բանվորական շարժման մեջ խաղացել են և խաղում են 1917 թ. շրջանի և հետագա տարիների Ռուսաստանի գործարկումները : Այդ մասին մանրամասն կը խոսենք հետևյալ գլխում :

### ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՐՅԵՐ

1. Ինչո՞ւ արհաւիրման արշալույսին բոլոր միութիւններն անխուսափելիորեն պետք և կազմակերպվելին ըստ արհեստների :

2. Ինչո՞ւ միութեանները կառուցումն ըստ արտադրական նը-  
շանի ավելի ոգտակար է պրոլետարիատի դատակարգային կռիւի  
հաջողութեան համար :

3. Ի՞նչպէս եր կառուցվում 50—80 թ. թ. շրջանի անդլիա-  
կան տրեդ-յունիոնը :

4. Ի՞նչն է նպատում , վոր միութեաններն սկսում են ըստ ար-  
տադրական նշանի կառուցվել :

5. Ի՞նչպէս է կառուցվում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի  
սկզբի անդլիական տրեդ-յունիոնների ֆեդերացիան :

6. Ինչո՞ւ Գերմանիայում արհմիութեանների կառուցման մեջ  
արտադրական սկզբունքը և ցենտրալիզմն ավելի մեծ դարգացման  
հասան , քան Անգլիայում :

7. Ի՞նչպէս է կառուցվում գերմանական մետաղագործների  
միութեանները :

8. Ի՞նչպէս անդրադարձան Փրանսիական ժողովրդական տըն-  
տեսութեան և պրոլետարիատի քաղաքական կռիւի պայմանների  
առանձնահատկութեանները Ֆրանսիայի արհմիութեանների կա-  
ռուցվածքի վրա :

9. Ի՞նչով է պայմանավորված միջմիութենական միացումների  
յերևան գալը :

10. Ի՞նչպէս են աշխատում Ֆրանսիայում միջմիութենական  
միացումները և ի՞նչով է բացատրվում նրանց նշանավոր դերը Փը-  
րանսիական արհշարժման մեջ :

11. Ի՞նչով է բացատրվում միջմիութենական կազմակերպու-  
թեանների թուլութեանն Անգլիայում :

12. Ի՞նչ դեր ունին միջմիութենական միացումները Գերմա-  
նիայում և Ամերիկայում :

13. Ինչո՞ւ հետպատերազմական շրջանը հեղախոխական վե-  
րելքները շրջան և արհմիութեանների կառուցման համար :

14. Ի՞նչպէս եր ընթանում բանվորների դասակարգային կռիւին  
Անգլիայում հետպատերազմական շրջանում :

15. Ի՞նչ չափով ուժեղացան պատերազմից հետո Անգլիայի  
արհմիութեանների մեջ միութեանների միացումներն ըստ արտա-  
դրութեան , ինչպէս և արհշարժման ցենտրալիզացիան :

16. Ինչո՞ւ արհշարժման դեղին առաջնորդներն ընդլիմանում  
են համարային միութեանների ձուլմանը :

17. Ի՞նչպէս եր ընթանում ամերիկյան բանվորների դասակար-  
գային կռիւը հետպատերազմական շրջանում :

18. Ի՞նչ է «Արհեստակցական պրոպագանդայի լիզան» և ի՞նչ է նրա գերը :

19. Ի՞նչ<sup>օ</sup>ւ պատերազմի վերջանալուց հետո առաջին տարիներում Գերմանիայի արդյունաբերութեանը յերևութական ծագվածան չըջան եր սպրում : Ի՞նչ գեր խաղաց Ռուրի գրավումը :

20. Ի՞նչպէս եր ընթանում բանվորներին դատակարգային կոիւր Գերմանիայում հետպատերազմական չըջանում :

21. Ի՞նչպէս ծագեց գործարկումներին հեղափոխական շարժումը Գերմանիայում և ինչ<sup>օ</sup>ւմն է նրա գերն ու նշանակութեանը :

22. Ինչ<sup>օ</sup>ւ Ֆրանսիայում հետպատերազմական կրիզիսը մի բիչ մեղմացած ձևով տեղի ունեցավ :

23. Ի՞նչպէս անդրադարձավ Ռուրի գրավումը Ֆրանսիական ժողովրդական անտեսութեան վրա :

24. Ի՞նչպէս ընթացավ բանվորներին դատակարգային կոիւր Գերմանիայում հետպատերազմական չըջանում :

25. Ի՞նչու պատահում առաջացավ Աշխատանքի Ընդհանրական Կոնֆեդերացիայի մեջ և Աշխատանքի Ռենխար Կոնֆեդերացիան բաժանվեց :


26. Ի՞նչ ներքին կազմակերպչական վերլիքներ ունեցան Ֆրանսիական սինդիկատները հետպատերազմական չըջանում :

27. Ինչ<sup>օ</sup>ւ յերևան յեկավ և ի՞նչպէս և զարգանում գործարկումներին շարժումը Ֆրանսիայում :

28. Ինչ<sup>օ</sup>ւ անխուսափելի յեն արտադրական սկզբունքի հետադա հաղթանակները բոլոր յերկրներին արհմիութեաններին կառուցվածքի մեջ :

ԳՐԱԿԱՆՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- М. ТОМСКИЙ—Принципы организационного строительства.  
Изд. ВЦСПС.
- А. ЧЕКИН—История, теория и практика профдвижения  
Вып. I и II.
- А. ЧЕКИН—Очерки современного тред-юнионизма. Изд.  
ВЦСПС.
- А. ЧЕКИН—Индустриальные рабочие мира. Изд. ВЦСПС.
- П. МАЙСКИЙ—Профессиональное движение на Западе.  
Изд. Ленингр. ГСПС.
- С. ГАЛЬПЕРИН—История профдвижения во Франции  
после войны. Изд. ВЦСПС.
- Э. НЕСТРИЦКЕ—Профдвижение. ч. I, стр. 178—227, ч. II.  
Изд. ВЦСПС.
- Э. ЛЕДЕР—Профдвижение в Германии после революции.  
Изд. ВЦСПС.
- ПАНКРАТОВА—Фабзавкомы в Германии. Изд. „Кр. Новь“.  
Фабзавкомы. Сборник. Изд. „Красный Профинтерн“.
- В. ФОСТЕР—„Лига профессиональной пропаганды“  
Изд. „Красный Профинтерн“.





20.	Վիշնեվեցկի	— «Աշխատանքի հաշմանդամների ազատ- հավաքումը» . . . . .	20
21.	«Կանոնադրության դարձարկումներին և անդկումներին կից կուլտ-հանձնաժողովներին» . . .		5
22.	«Ուրինակելի կանոնադրություն բանակումներ, կարմիր անկյան և Ֆիդ-կուլտի խմբակի» . .		25
23.	Սեյյուշկին	— «Ակումբային աշխատանքի խնդիրնե- րը» . . . . .	30
24.	Լ յ ա շ կ ու	— «Գողերը» . . . . .	5
25.	»	«Առաջին կարմիր դրոշը» . . . . .	10
26.	Սպերանսկի	— «Տուրքերկուլյորը» . . . . .	10
27.	«Յեկիր պայքարի, ստրուկ գաղութի», (Խնացներ.) . .		10
28.	«Փոխադնության դանձարկներին կազմակերպման կար- գը» . . . . .		10
29.	Յ ա . Ֆ ի ն	— «Ռուսաստանի արհարծման 20 տա- րին» . . . . .	50
30.	«Պրոֆմիությունը և նրա անդամները» (ապագրվում և)		
31.	Ռոզենֆելդ	— «Խնչու և ինչպես պետք և ուսում- նասիրել արհարծումը» . . . . .	20
32.	»	«Բանվորական առաջին միավորումները կապիտալիզմի արշալույսին» . . . .	20
33.	»	«Խնչպես առաջացան և ինչպես էլին աշխատում առաջին արհմիությունները»	70
34.	»	«Արհեստակց. շարժումը մինչև 1914 թ.»	30
35.	»	«Արհեստափրցական շարժումը համաշ- խարհային պատերազմից հետո».	30
36.	»	«Արհեստակցական շարժումն Ռուսաստա- նում (1905—25 թ.)».	80
37.	»	«Խնչ և արհեստակցական արտադրական միու- թյունը: Արհմիությունը և կուսակցությունը»	
38.	»	«Ամատերգամ և Մոսկվա».	
39.	»	«Խնչ և պրոֆմիության կանոնադրությունը»	
40.	»	«Խնչ և հավաքական պայքանագիրը».	
41.	»	«Խնչ և տալիս բանվ. աշխատանքի որենսդիրքը»	
42.	»	«Խնչ և սոցիալական ապահովագրությունը».	
43.	»	«Աշխատանքները բանակումում».	
44.	»	Պրոֆաշխատանքը գյուղում:	

ՄԵՐ ԱՔԱՆԱԿ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻՆ ՁԵՂՁ

73 Ազգային գրադարան



NL0945046

94.

- 50 -

1926p..

ԳԻՆՆ Ե 30 ԿՈՊ.

ԱԳԶ

886

=